



15(590)  
12.06.2020

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գլխավոր, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ՍՏԵՂԾՎՈՒՄ Է ԻՎԱՆ ԱՐԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆԴ

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարությունը հանդես է եկել նոր նախաձեռնությամբ: Նպատակ ունենալով խթանել բնագիտական առարկաների հանդեպ հետաքրքրությունը դպրոցականների և շրջանավարտների մոտ, ձեռնամուխ է եղել ստեղծելու արցախցի անվանի ֆիզիկոս, ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ, «Վաչագան Բարեպաշտ» մեդալակիր Իվան Արայանի անվան կրթական ֆոնդ, տեղեկացնում են Արցախի ԿԳՄ նախարարությունից:

«Մեծ է Իվան Արայանի ավանդը Արցախում բնագիտական առարկաների, մասնավորապես ֆիզիկայի հանդեպ սեր ու հետաքրքրություն սերմանելու, առարկայի ուսուցման մեթոդաբանությունը լավագույն հիմքերի վրա դնելու գործում: 1950-ականներից սկսած՝ Ի. Արայանը ձեռնամուխ է եղել հայրենի գյուղում՝ Ավետարանոցում ֆիզիկայի ուսումնամեթոդական կաթինետ ու լաբորատորիա հիմնելու գործին, ստեղծել նյութատեխնիկական հարուստ բազա՝ ուսուցման համար անհրաժեշտ սարքերով, որոնք նախագծվում և պատրաստվում էին նաև աշակերտների ջանքերով: Արայանի ստեղծագործ մոտեցման շնորհիվ գործում էր ֆիզիկայի ու աստղագիտության արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների յուրատիպ համակարգ, որտեղ ընդգրկված աշակերտների համար դպրոցում և բնության գրկում կազմակերպվում էին գործնական հետաքրքիր պարապմունքներ, էքսկուրսիաներ, հանդիպումներ:

Նման համակարգային լուծումների արդյունքում է, որ Արայանի տասնյակ աշակերտներ ընտրել են ֆիզիկայի ուսուցչի մասնագիտությունը և հաջողությամբ աշխատել ու աշխատում են Արցախի, Հայաստանի Հանրապետության տարբեր կրթական հաստատություններում:

«Իվան Արայան» ֆոնդի ստեղծմամբ նախարարությունը նպատակ ունի վերակենդանացնել երբեմնի այդ սերն ու հետաքրքրությունը բնագիտական առարկաների հանդեպ:

Ֆոնդը 50 000 դրամ կրթաթոշակ է սահմանելու արցախցի այն դիմորդների համար, ովքեր բարձրագույն կրթություն կստանան ԱրՊՀ-ում և ՀՀ բուհերում ֆիզիկա ու քիմիա առարկաներից: Առաջին կիսամյակում կրթաթոշակը տրամադրվելու է բոլոր ընդունվածներին, երկրորդ կիսամյակից հաշվի է առնվելու ուսանողի առաջադիմության միջին որակական գնահատականը:

Նախարարությունը երաշխավորում է և հետաձուտ է լինելու, որ ֆոնդի աջակցությամբ սովորած ուսանողները աշխատանքի անցնեն Արցախի կրթական հաստատություններում՝ ձեռք բերած գիտելիքները ծառայեցնելով ի շահ երկրի:

ՀՀ բուհերի նշված բաժիններ ընդունվելու դեպքում կրթաթոշակից կարող են օգտվել այն արցախցի ուսանողները, ովքեր կստորագրեն Արցախի կրթության, գիտության և մշակույթի նախարարության հետ պայմանագիր առ այն, որ պարտավորվում են վերադառնալ ու աշխատել Արցախում:

Ֆոնդի ստեղծման աշխատանքներին միացել է Իվան Արայանի որդին՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Կամո Արայանը՝ պատրաստակամություն հայտնելով օգնել լավագույն փորձով:

Ֆոնդահայթայթման աշխատանքներն արդեն իսկ ընթացքի մեջ են: ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը ֆոնդի առաջին հովանավորներից է: Նախագահը պատրաստակամություն է հայտնել իր աշխատավարձի մի մասը հատկացնել ֆոնդի բյուջեի ձևավորմանը:

Միլեթի շրջանավարտներ, օգտվեք ձեզ ընծեմված այս հրաշալի հնարավորությունից, սպասում ենք ձեր հայտերին»,-նշված է ԿԳՄ հաղորդագրության մեջ:

## ԱՌՑԱՆՑ ԱՍՈՒԼԻՍ ԸՆԹԱՑԻԿ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ



Ընդունելության քննություններ, ընթացիկ խնդիրներ. այս թեմայով հունիսի 1-ին առցանց ասուլիս են տվել ԱՀ կրթության, գիտության և մշակույթի (ԿԳՄ) նախարարն ու Գնահատման և թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) տնօրենը:

Նախքան քաղաքացիների հարցերին պատասխանելը ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանը շնորհավորանքի խոսք ասաց Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ:

«Համոզված եմ, որ պետություն-ընտանիք փոխգործակցության պայմաններում հեշտությամբ ենք կառուցելու մեր երեխաների երազած ապագան՝ երկուստեք զերծ պահելով նրանց արատավոր երևույթներից, սերմանելով բարոյական բարձր արժեքներ, ներարկելով լավ մարդու, լիիրավ քաղաքացի դառնալու ձգտումը: Այսօր ամբողջ աշխարհը պատուհասած համավարակի պայմաններում լինենք ավելի սթափ, շրջափառյալ ու հոգատար մեր փոքրիկների նկատմամբ»,-մասնավորապես ասաց նախարարը:

Ապա անդրադառնալով բուն թեմային՝ նա ասաց, որ 2020-2021 ուսումնական տարվա ընդունելությանն առնչվող բոլոր իրավական փաստաթղթերը՝ ընդունելության կարգը, մասնագիտությունների ցանկը, համալսարանների ծածկագրերը և այլն տեղադրված են ԱՀ ԿԳՄ կայքէջում, ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև «Լուսարար» պաշտոնաթերթում:

Նախարարի խոսքով՝ հարցերի մի զգալի մաս վերաբերում է հայաստանյան բուհերում Արցախի հատկացված տեղերի համար ընդունելությանը: Նա տեղեկացրեց, որ ՀՀ պետական բուհերում Արցախի հատկացվել է 60 նպատակային (անվճար) տեղ: Ընդհանրապես, այս տարի բուհ ընդունվելու համար դիմորդները պետք է հանձնեն մեկ քննություն՝ միասնական կամ ներբուհական՝ պայմանավորված մասնագիտությունների առանձնահատկությամբ: Դիմում-հայտերը ներկայացվում են էլեկտրոնային եղանակով: Լ. Ղարախանյանը պարզաբանեց՝ ինչպես պետք է դիմել բուհեր: Քաղաքացիներին հետաքրքրում է, թե ինչպես է իրականացվելու անվճար ուսուցումը, որի

մասին հայտարարել է ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը:

Լ. Ղարախանյանը տեղեկացրեց, որ 2020-2021 ուսումնական տարվանից բոլոր բուհերում ընդունելության արդյունքներով դրական միավորներ ստացած դիմորդները հաշվեգրվելու են անվճար ուսուցման համակարգում: Համաձայն կարգի՝ ուսումնական երկրորդ տարում գործելու է հետադարձ կապի սկզբունքը, և միջին որակական գնահատականը սահմանվելու է երկրորդ կուրսից: Անվճար ուսուցման համակարգից օգտվելու են նաև մագիստրատուրայում սովորող ուսանողները: Անվճար ուսուցումը, սակայն, չի վերաբերելու հեռակա համակարգում սովորող ուսանողներին:

Լ. Ղարախանյանի տեղեկատվությամբ՝ Արցախի բուհերում ամփոփիչ ատեստավորումները պարետատան սահմանած կանոններով հնարավոր է կազմակերպել լսարանային պայմաններում. նախարարությունը հնարավորություն է տվել, որ բուհերը ինքնուրույն որոշեն ամփոփիչ ատեստավորումների անցկացման ձևերը՝ նրանց տրված ակադեմիական ազատությունների հիմամբ:

Ինչպես է կազմակերպվելու ուսումնական գործընթացը նոր ուսումնական տարում: Նախարարը տեղեկացրեց, որ մեխանիզմներ և կանոններ են մշակվում, որպեսզի 2020-2021 ուսումնական տարում տարրական օղակում դասապրոցները կազմակերպվի դպրոցներում, քանի որ, ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, տարրական օղակի ուսուցումը հնարավոր չէ կազմակերպել առցանց տարբերակով: Ուսումնական պարապմունքները կենդանի կարող են կազմակերպել գյուղական վայրերի սակավակազմ դպրոցները, անշուշտ, պահպանելով սանիտարահիգիենիկ նորմերը: Իսկ ավագ դպրոցում, հատկապես նրա վերջին երկու դասարաններում ուսումնական գործընթացը կարող է կազմակերպվել առցանց տարբերակով՝ պայմանավորված համավարակով:

Լ. Ղարախանյանը տեղեկացրեց, որ նախարարության կողմից իրականացված վիճակագրական վերլուծություններից և մշտադիտարկման գործընթացից պարզվել է, որ հեռավար կրթությունը հասանելի չի եղել բոլորին տեխնիկական և գործընթացին չտիրապետելու պատճառներով: Այս ուղղությամբ արդեն իսկ տարվում են որոշակի աշխատանքներ: Առաջիկայում առցանց տարբերակով ուսուցչների համար կմեկնարկեն վերապատրաստման դասընթացներ: ԿԳՄ նախարարությունը քայլեր է ձեռնարկում ինչպես ուսուցչներին, այնպես էլ աշակերտներին տեխնիկական զինելու համար: «Մենք հույս ունենք, որ նոր ուսումնական տարում կորոնավիրուսային համավարակն այնպիսի ընթացք չի ունենա, որ կրկին անցում կատարենք առցանց ուսուցման, սակայն սեպտեմբերի 1-ին մենք զինված կլինենք համապատասխան գործիքակազմով և առցանց հարթակներին տիրապետող ուսուցչությամբ»,- վստահեցրեց Լ. Ղարախանյանը:

Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ

## ԱՀ ԱԺ ՈԼՈՐՏԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ԿԳՄ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը հունիսի 5-ին խորհրդարանում ընդունել է կրթության, գիտության և մշակույթի նորանշանակ նախարար Լուսինե Ղարախանյանին:

Մշտական հանձնաժողովի նախագահ Արամ Հարությունյանը իր և հանձնաժողովի բոլոր անդամների անունից շնորհավորելով նախարարին պաշտոնը ստանձնելու կապակցությամբ՝ պատրաստակամություն է հայտնել համագործակցել ոլորտների զարգացման հարցերում և անհրաժեշտության դեպքում նպաստել օրենսդրական դաշտի բարելավմանը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ կրթության, գիտության և

ղովի հետ սերտ համագործակցություն և հիմնախնդիրների լուծման ուղղությամբ աջակցություն: Լուսինե Ղարախանյանը նաև ներկայացրել է նախարարության առաջիկա անելիքները՝ բնագիտական առարկաների ուսուցման, առցանց համակարգերի ներդրման վերաբերյալ:

Հանդիպման ընթացքում երկուստեք կարևորվել են COVID-19 համավարակի պայմաններում հեռավար դասընթացների կազմակերպման արդյունավետությանը, տնօրենների և ուսուցիչների վերապատրաստման ծրագրերին վերաբերող հարցեր:

Անդրադարձ է արվել նաև սեպտեմբերից ներդրվող ուսուցման անվճար համակարգի առանձնահատկություններին, տեղեկացնում է Ազգային ժողովի լրատվության բաժինը:



Արամ Հարությունյանը (ձախ) և Լուսինե Ղարախանյանը (աջ) հանդիպումից հետո:

ԸՆԹԱՅԸ

# ԱՎԱՐՏՎԵՑ ԲՈՒՐՆԵՐԻ ԴԻՄՈՐՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ



Հունիսի 10-ին լրացավ բուհերի ընդունելության հայտերի ընդունման ժամկետը, որը սկսվել է մայիսի 25-ից: Այս տարի մասնագիտությունների ընտրության և ընդունելության դիմում-հայտերի ընդունման գործընթացը կատարվել է միաժամանակ ԱՀ գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից՝ պայմանավորված արտակարգ իրավիճակի թելադրած համաճանգըներով: Ինչպես հայտնի է, մինչ կորոնավիրուսը ըստ մասնագիտությունների հայտարարված առարկայական երկու-երեք քննությունների փոխարեն, որոնց համար դիմորդները հայտագրվել էին փետրվար ամսից, նրանք հիմա կհանձնեն մեկ քննություն, և անհրաժեշտություն էր առաջացել այն «վերընտրել» կամ նոր հայտագրվել: Եվ եթե նախկինում բուհերն ընդունել են մասնագիտությունների, իսկ ԳԹԿ-Ն՝ ընդունելության քննությունների դիմում-հայտերը, հիմա այդ

երկու գործընթացն իրականացնում է վերջինս: Եվ կարելի է հասկանալ նրա ծանրաբեռնվածության աստիճանն այս օրերին, երբ չնայած հայտարարվել էր, որ դիմում-հայտերը ԳԹԿ-Ն ընդունելու է առցանց, դրա համար վաղորդ ուսումնական հաստատություններ ուղարկելով բացատրական նյութերը, որոնք տեղադրված են նաև ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարության պաշտոնական կայքէջում, միևնույն է, դիմորդների գերակշիռ մասը նախընտրել է անձամբ ներկայանալ և տեղում լրացնել հայտերը: Եվ չնայած ԳԹԿ-ի շենքային ոչ այնքան պատշաճ հարմարություններին, Կենտրոնի ղեկավարությունը կարողացել է ապահովել հակահամաճարակային սանիտարահիգիենիկ պայմանները և սոցիալական հեռավորություն պահելով՝ ընդունել շուրջ 680 դիմորդի հայտերը:

Ինչպես տեղեկացանք ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանից, լարվածությունը մեծապես պայմանավորված է եղել նաև նրանով, որ դիմորդների մեծ մասը ճիշտ պատկերացում չի ունեցել հայտերի լրացման նոր ձևի մասին: «Իհարկե, նրանք մեղավոր չեն, որ վերջին ամիսներին դպրոց չեն հաճախել, և բոլորը չէ, որ ճիշտ են հասկացել ընդունելության նրբությունները: Դրա համար թե՛ հեռախոսով, թե՛ առկա ձևով նրանց մեկ ամս անց բացատրել ենք, որ հետագայում մրցույթի ժամանակ նրանք խնդիրներ չունենան»: Ըստ ԳԹԿ տնօրենի՝ այդ խնդիրը հիմնականում կապված է լինելու դիմում-հայտի առաջին տողով ընտրված մասնագիտության՝ անվճար և վճարովի ուսուցման հայտի գերակայության հետ: Յու. Քարամյանն ասաց, որ առաջնորդվում

են ԱՀ կառավարության համապատասխան որոշմամբ, որտեղ նշված է, թե ըստ մասնագիտությունների քանի դիմորդ պետք է ընդունեն անվճար և վճարովի ուսուցման համակարգում: Նրա խոսքով՝ բացառվում է, որ այս տարի նշված տեղերից ավելի դիմորդներ ընդունեն: «Տվյալ մասնագիտություն կարող են ընդունվել միայն 1-ին տողով ընդունված դիմորդները, 3-րդ, 4-րդ... 7-րդ տողով նշվածները կարող են զալ այստեղ, եթե 1-ին տողով նշվածների դեպքում թափուր տեղեր լինեն: Այստեղ նրբությունը դա է: Դա ճիշտ ձև է, քանի որ գերակայությունը տրվում է մասնագիտական կողմնորոշմանը»,- ասաց նա:

Քանի որ դիմորդները հանձնելու են ընդունելության մեկ քննություն, Յու. Քարամյանի համոզմամբ՝ մրցույթը ծանր է լինելու: «Երեք առարկայից քննություն հանձնելու դեպքում ավելի հեշտ է եղել մրցույթն անցկացնել: Բայց հիմա կարող է մեծ քանակով դիմորդներ նույն գնահատականը ստանան: Եվ այստեղ հաշվի են առնելու մի շարք պայմաններ, ասենք՝ պետական ավարտական քննությունների միջին գնահատականը, ավարտական փաստաթղթում առավել բարձր գնահատականը և այլ հանգամանքներ:

Միասնական քննություններն անցկացվելու են հուլիսի 1-10-ը քննական կենտրոններում: Ներքուհական քննությունն անցկացվելու է տվյալ բուհում, ինչպես նաև՝ մրցույթը: Քննությունների հիմնական փուլն ավարտվելու է հուլիսի 15-ին, իսկ հուլիսի 18-22-ը անցկացվելու է լրացուցիչ փուլը թափուր տեղերի համար:

Սեփ. լրատվություն

## ՄԱՔՍԻՄ ԵՐՎԱՆԻ ԶՈՎԱՆՆԻՍՅԱՆ



Խորը վշտով տեղեկացանք, որ կյանքից հեռացել է հայ գրականության երևելի դեմքերից մեկը՝ արձակագիր, լրագրող, հրապարակախոս Մաքսիմ Հովհաննիսյանը: Մարդ, որը խորհրդանշուն է մի ողջ դարաշրջան:

Մեծ է Մ. Հովհաննիսյանի ավանդը Արցախյան գոյապայքարում: Գրողի, լրագրողի, մտավորականի լավագույն հատկանիշները միաձուլելով ժողովրդի ակնկալիքներին՝ նա ստեղծել է հերոսական մի տարեգրություն՝ Հրամոտ Մաթևոսյանի բնորոշմամբ դառնալով «Բանի գեներալ»:

Մաքսիմ Երվանի Հովհաննիսյանը ծնվել է 1934թ. փետրվարի 18-ին Ասկերանի շրջանի Հարավ գյուղում: 1952թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցը: 1958-ին՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը լրագրողի մասնագիտությամբ: Բուհն ավարտելով՝ անմիջապես վերադարձել է Արցախ և աշխատանքի անցել զանգվածային լրատվության բնագավառում՝ որպես ռադիոհաղորդումների մարզային վարչության թղթակից, ապա՝ ավագ խմբագիր:

1967-1971թթ. Մաքսիմ Հովհաննիսյանն աշխատել է «Խորհրդային Ղարաբաղ» թերթում՝ որպես բաժնի վարիչ, 1971-1986թթ.՝ ռադիոհաղորդումների մարզային վարչության գլխավոր խմբագիր, 1986-1987թթ. աշխատել է որպես Ստեփանակերտի Մ. Գորկու (այժմ Վ. Փափազյանի) անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն, 1988-1993թթ.՝ «Խորհրդային Ղարաբաղ», հետագայում՝ «Արցախ» օրաթերթի գլխավոր խմբագիր, 1993-1995թթ.՝ ԼՂՀ նախարարների խորհրդի լրատվության և մամուլի դեպարտամենտի ղեկավար, 1995-1998-ին՝ «ԼՂ Հանրապետություն» թերթի գլխավոր խմբագիր, ապա ԼՂՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ:

Մեծ է եղել Մ. Հովհաննիսյանի դերը Արցախի հասարակական կյանքում: Նա հայտնի «13-ի նամակ»-ի համահեղինակ է, որը յուրօրինակ ռուսեր էր խորհրդային իշխանության համար: Հետագայում, երբ սկիզբ առավ Արցախյան շարժումը, Մ. Հովհաննիսյանը դարձավ իր լուսնան է ներդրել համաժողովրդական ընդվզման մեջ: Նրա խոսքը միշտ էլ մպատակամետ է եղել, ոգեշնչող ու համարձակ:

Հարուստ ու բարձրարվեստ գրական ժառանգություն է թողել տաղանդավոր գրողը: Նրա պատմվածքները, վիպակներն ու էսսեները նորագույն շրջանի հայ արձակի մնայուն արժեքներից են: Իր հոգու և մտքի արձաններով նա սերտորեն կապված է եղել ազգային այն հողին, առանց որի ընդհանրապես արվեստ չի լինում: Նա ստեղծեց անկեղծ ու բազմաշերտ արձակ, գրականություն բերեց արցախցու հոգեկերտվածքն ու բարբառի նրբերանգները, հոգեբանական նոր շերտեր հաղորդեց վավերագրական արձակին:

«Մենք» ժողովածուի համար 1989թ. Մ. Հովհաննիսյանն արժանացել է Հայաստանի գրողների միության Դ. Դեմիրճյանի անվան մրցանակի, 1997թ. «Գնում ենք արևին դիմավորելու» գրքի համար՝ ԼՂՀ Եղիշեի անվան մրցանակի:

Մ. Հովհաննիսյանը ԼՂՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի, «Մովսես Խորենացի» մեդալի ասպետ է: ԼՂՀ վաստակավոր լրագրողի կոչմանն արժանանալուց հետո պարգևատրվել է Հայաստանի գրողների միության «Գրական վաստակի համար» մեդալով:

Ցավակցում և համբերություն ենք մաղթում Հովհաննիսյանների ընտանիքին, Հայաստանի և Արցախի գրական օջախներին, հայ ժողովրդին: Համոզված ենք, որ նա կմտնի հավերժություն՝ որպես ազնվացնող գրականության խորհրդանիշ:

Բազմավաստակ տաղանդավոր գրողի ու լրագրողի հիշատակը միշտ վառ կմնա բազմահազար ընթերցողների ու նրան ծանաչողների սրտերում:

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարություն

## ԱՎԱՐՏՎԵՑ ՈՒՍԱՐԻՆ

2019-2020 ուսումնական տարում Քաշաթաղի շրջանի 52 հանրակրթական դպրոցներում ընդգրկված էր 2050 աշակերտ, որից 111-ը հրաժեշտ տվեց դպրոցին: Շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանի տեղեկատվությամբ՝ շրջանավարտների մոտ կեսն այս տարի դիմել է ընդունվելու ՀՀ և ԱՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ:

11 դպրոց շրջանավարտ չի ունեցել: Ամենաշատը՝ 13 շրջանավարտ տվեց Բերձորի Վահան Զատիկյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոցը: Կապված նոր կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու հետ՝ դպրոցներում չկայացան Վերջին զանգի ամենամյա բազմամարդ տոնական միջոցառումները, և շրջանավարտները դպրոցին հրաժեշտ տվեցին այն հույսով, որ եկող տարի վիճակն այլ է լինելու: Երկրորդ կիսամյակում դասընթացները նույնպես ոչ բավարար էին: Առցանց կարգով տեղի ունեցող ուսումնառությունն այն արդյունքը չի տա, ինչ առկա ուսուցումը: Հատկապես դժվար էր տարրական դասարանների աշակերտների և ուսուցիչների համար: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ համացանցի կապն անորակ է Քաշաթաղի շրջանում, որոշ համայնքներում գրեթե անհասանելի, և շատ աշակերտներ էլ չունեն համապատաս-

խան տեխնիկական միջոցներ, չենք կարող շրջանում կայացած համարել առցանց դասավանդումը: Հուսանք, որ այս տարվա սեպտեմբերի 1-ին բոլոր դպրոցներում կինչի ուրախ զանգը՝ ազդարարելով նոր ուսումնական տարվա սկիզբը, և մեր աշակերտներն իրենց դասասնյակներում կլսեն ուսուցիչներին:



Մինչ կորոնավիրուսի հայտնվելը Արցախի Հանրապետությունում կայացավ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը, որին մասնակցեցին նաև քաշաթաղի դպրոցականները: Քաշաթաղիները բարձր արդյունք են ապահովել ՆՁՊ առարկայից: Աղաձորի Հակոբ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանից Արթուր Մաթևոսյանը, Ուռեկանի միջնակար-

գից 11-րդ դասարանից Դավիթ Միքայելյանը և Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգի 11-րդ դասարանից Նարե Հովսեփյանը նշված առարկայից հավաքել են բարձր միավորներ և արժանացել առաջին և երկրորդ կարգի դիպլոմների, պարգևների: Բերձորի Վ. Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգի 11-րդ դասարանի աշակերտուհի Գայանե Ընթոյանը Արցախի հանրապետական փուլում արժանացել է ԱՀ ԿԳՄՆ գովասանագրի հայտը լեզու առարկայից: Բերձորի Վահան Զատիկյանի անվան հ. 2 միջնակարգից 11-րդից Հայկ Դավթյանը ռուսաց լեզվի օլիմպիադայում է հավաքել բարձր միավոր և արժանացել ԱՀ ԿԳՄՆ երկրորդ կարգի դիպլոմի և դրամական պարգևի:

Քաշաթաղի շրջանի դպրոցներում 2019-2020 ուստարում հիմնական կրթություն է ստացել 172 աշակերտ, որոնց մեծ մասը շարունակելու է ուսումը դպրոցում: Վ. Մովսիսյանն ուրախությամբ նշեց, որ եկող ուստարում շրջանի աշակերտների թիվը կհամալրվի 215-ից ավելի առաջին դասարանցիներով (անցնող ուստարում նրանց թիվը 197 էր): Այսինքն՝ աշակերտների ընդհանուր թիվը կավելանա շուրջ 100-ով:

Ջոհրաբ ԸՈՒՆՅԱՆ

30 ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՇՈՒՆԻՍ - 1990Թ.

Իմ օրագրից

Նախաբանի փոխարեն

Կորոնավիրուսի պատճառով քանիներորդ ամիսն է, մեր երեխաները կտրված են դպրոցից: Չնայած դրան, ես այսօրվա երեխաներին երջանիկ են տեսնում, նրանք երջանիկ աստղի տակ են ծնվել՝ ազատ, անկախ Արցախի պայծառ աստղի տակ, և անկախ կարամտիմային վիճակից, այսօրվա երեխաները, թելուզ և տանը, վայելում են իրենց երջանիկ մանկությունը: Այդքանը ես տեսնում եմ իմ երեխաների, մասնավորապես ծոռների մեջ, որոնք այս րոպեներին ուրախ-զվարթ թռչնակների պես ծվվում են շուրջս ու խանգարում գրելու: Կրկնում են, երջանիկ են այսօրվա երեխաները, չնայած կորոնավիրուսայ համաճարակի, կարամտիմա-արտակարգ դրությանը: Բայց հնարավոր պայմաններ ստեղծվեցին, նույնիսկ դպրոցից դուրս կազմակերպվեց նրանց ուսման գործը, որը «հեռավար ուսուցում» անվամբ մտավ մանկավարժական գիտության պատմության մեջ: 30-32 տարի առաջ Արցախյան շարժման օրերին, երբ մեր դպրոցը պարտադրված դասադուլի մեջ էր, ոչ մի պայման չկար դպրոցից դուրս շարունակելու ուսման գործը: Երբ վերսկսում էինք պարապմունքները, բավարարվում էինք միայն 35 րոպեանոց դասերով, իսկ բուհում՝ 70 րոպեանոց դասախոսությամբ: Իսկ այսօր և դպրոցը, և բուհը հնարավորություն ունեցան նոր ձևով կազմակերպել ուսման գործը, նորովի ավարտել ուսումնական տարին: Ես այսօր նոր ձևով կազմակերպել բուհական կյանքը: Այնպես որ, նորից են կրկնվում, երջանիկ է այսօրվա սերունդը:

Յուրեղի 1-ին նպատակ ունեի լինել մայրաքաղաքում և ծանոթանալ, թե ինչպես է կազմակերպվում երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումը: Սակայն թոռնուհին՝ Թամարը, զգուշացրեց, որ հրապարակում ոչ մի միջոցառում չի նախատեսված, և սպասեցի «Օր» լրատվական երեկոյան հաղորդմանը, որից ուրախությամբ լսեցի մեր նորընտիր նախագահ Արայիկ Չարությունյանի շնորհավորական խոսքը օրվա առթիվ: Դիտեցի «Արմատ» կենտրոնում կազմակերպված «Կարամտիմը երեխաների աչքերով» մանկական նկարչական ցուցահանդեսը և ուրախությամբ իմացա, որ թոռնուհուս՝ Օլյախի սան, Իվանյանի Օնիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանի աշակերտ Սպարտակը Ասկերանում կազմակերպված միջոցառման ժամանակ զբաղեցրել է առաջին տեղը: Այս տրամադրության ազդեցության տակ դիմեցի օրագրիս:

**1.06.1990թ.:** Օրը հինգշաբթի է: Պոլյանիչկո-սաֆոնովյան ռեժիսորը շարունակվում է: Եղա դպրոցում: Ուսուցիչներից յուրաքանչյուրը յուրովի պատմում է մայիսյան ընտրությունների մասին, թե ինչ դժվարություններ են հաղթահարել և իրենց քվեն տվել: Դեպի ԳԽ արցախցի դեպուտատության թեկնածուների օգտին: Դպրոցում իմացա, որ Պոլյանիչկոն քիթը խոթել է նախ այս կամ այն գյուղ, կազմկոմիտե է ստեղծվել նաև Տողի աղբյուրային ենթաշրջանում, որի նախագահ է նշանակվել մեզ ծանոթ (իհարկե՝ հայատնաբան) Նիկոլ Զհանգիրովը՝ Տողի ինտերնացիոնալ միջնակարգ դպրոցի նախկին տնօրենը: Դպրոցից ուշ վերադարձա: Չնայած եմ վաղիկ Սարգսյանին՝ նորություններ իմանալու, չի պատասխանում, մի քանի անգամ փորձում եմ, բայց իզուր...

**2.06.1990թ.:** Իրիկնադեմին երեխաների ուրախ ծայրեր են լսում: Պատուհանից նայում եմ դուրս: Մի խումբ աղջիկներ խաղում են առանց տիրոջ մնացած Մեշաղի Ազիզբեկովի կիսանդրու պատվանդանի մոտ (չգիտեմ կիսանդրին երբ են վերցրել, և ինչ ճակատագրի է արժանացել): Գնում եմ երեխաների խաղը նայելու: Չրիկլը դանի էին խաղում: (30 տարի առաջ մտքովս չի անցել հարցնեմ, թե ինչպես է կոչվում այդ խաղը: Միայն օրագրումս գրել եմ «չրիկլը դանի»): Քանի որ երեխա ժամանակ իմ ընկերներն էլ էին խաղում: Եվ այսօր դիմում եմ ավագ դստերս, թե ինչպես է կոչվում այդ խաղը: Նա պատասխանում է՝ կլասիկի: Բայց չէ՝ որ դա

հայերեն չէ: Այդժամ թոռնուհին դիմում է ծեռքի հեռախոսին ու ասում. գտա, այդ խաղը կոչվում է «Չալա-մուլա» կամ «Կլաս»: Լավ է, այս տարիքում ես մի բան էլ սովորեցի և դարձյալ ինձ պնդեցի. «Երջանիկ է մեր այսօրվա սերունդը, ինչ որ ցանկանա, կպտուցի»):

Երեխաներին թողնելով խաղը շարունակեմ, մտնում եմ մեր բակը: Մի քանի րոպեից հետո ծայրեր են լսում, և այդ ծայրերի վրա բակից դուրս են գալիս ու տեսնում աղջիկների մոտ մի քանի զինվորների: Մտնում եմ: Պարեկներ են՝ կապիտանի հրամանատարությամբ: Հարցնում են, թե ինչ է պատահել: Ասում են՝ պարետային ժամը մոտենում է, բայց երեխաները դեռ խաղում են, ժամանակն է, որ նրանք տարածքը ազատեն և գնան իրենց տները: Ես երեխաներին ուղարկում եմ տները և գրույցի բռնվում կապիտանի հետ: Նրան հայտնում եմ, որ 1951-1952թթ. իմ զինվորական ծառայությունն անց եմ կացրել Խմելիցիկի և Ստանիսլավ քաղաքներում, իսկ նա պնդում է, որ Ուկրաինայում Ստանիսլավ քաղաք չկա: Ես նրան հասկացնում եմ, որ կա, և ես այնտեղ ծառայել եմ որպես ավտոտեսուչ, և նույնիսկ յուրաքանչյուր փողոցում թե ինչ է գտնվում, այդ էլ գիտեմ: Ես Ստալինի մահվան մասին այդտեղ եմ լսել և սգո միտինգի ժամանակ ամբողջ մեջ չեմ կողմնորոշվել պատիվ տալ և զգաստ կանգնել: Երկար գրույցից հետո հրավիրել եմ մեր բակ և նստել խաղողի ծառի տակ սեղանի շուրջը, հյուրասիրել դարաբաղավարի: Մտերմամալուց հետո հրամանատարը խոստովանել է, որ հայերին լավ չի ճանաչել Բաքվում, իրեն զգուշացրել են չմտնելու ոչ մի հայի, որ նրանք վտանգավոր են և ամեն րոպե կարող են իրենց կյանքին վերջ տալ: Եվ սասց, որ արդեն համոզվել է, որ այդպես չէ, և շատ է ուզում իմանալ մեր պատմությունը: Ես նրան նախ բացատրում եմ, որ իսկապես հիմա Ուկրաինայում Ստանիսլավ քաղաք չկա, բայց եղել է, որը 70-ական թվականներին վերանվանվել է Իվանո Ֆրանկո անվանի գրողի պատվին: Եվ նա իր շնորհակալությունը հայտնեց ու խնդրեց Հայաստանի քարտեզը: Ես բոլոր թեմատիկ քարտեզներն ունեի, որ ձեռք էի բերել Մոսկվայի մարզի «Արբելովսկա» բազայից փոստի միջոցով: Եվ նրան մեկնեցի Մեծ Հայքի քարտեզը՝ «Великая Армения»: Նա զարմանքից քար էր կտրել: 4-5-րդ դդ. «Великая Армения», այն դեպքում, երբ այդ դարերում ոչ Կիլիկյան Ռուսիա կար և ոչ Ռուսիա: Ես պատմեցի, որ Մեծ Հայքն ունեցել է 15 մահանգ, որից 10-րդը՝ Արցախն էր: Այնպես որ, Մեծ Հայքի քարտեզը շրջել է Ուկրաինայում: Որոշ չափով համազտանում եմ, որ զինվորականների մեջ մարդիկ են տեսնում, որոնք պաշտպանում են հայերին: Նա ինձ պատմեց շտաբային սպա Իշչուկի մասին, որը հայանեստ մարդ էր և ամեն առիթով քննադատում էր կազմկոմիտեի գործունեությունը՝ ասելով, որ պարետատունը հիմնականում կատարում է Ադրբեջանի գրոհայինների կարգադրությունները: «Ադրբեջանի գրոհային տաքզուխները զենքի են կոչում, և պատրաստվում են հարմար առիթի, որպեսզի գեների դիմեն»:

**5.06.1990թ.:** Դպրոց գնալիս հանդիպում եմ Եղիկ Սարգսյանին՝ Ստեփանակերտի թիվ 21 միջնակարգ ՊՏՈՒ-ի փակամագործների մարպետին: Հարցնում են եղբոր՝ Վլադիկի մասին. «Ինչո՞ւ զանգերիս չի պատասխանում»: Իսկ նա զարմացած ինձ հարցով է պատասխանում. «Մի՞թե դու չգիտես, որ մայիսի 28-ից գ-լ Սաֆոնովի հրամանով անջատված են Շարժման բոլոր ակտիվիստների բնակարանային և ծառայողական հեռախոսները: Սաֆոնովը չի հանգուստացել 37 հոգու կալանավորելով, և այսօր էլ, ովքեր արտահայտում են իրենց կարծիքը, նրանց հեշտությամբ մեկուսացնում է կամ տնային բանտարկությամբ, կամ 15-30 օր կալանքով: Այնպես որ, խնդրում եմ զգույշ մնաս»: Մտածում եմ՝ ինչպես զգույշ մնամ: Աշակերտներին հպարտությամբ եմ պատմում մեր քաղաքի, մեր մարզի մաքուր օդի մասին, ասում էի, որ ճապոնիայում օդը այնքան է պակաս, որ կրակներում օդ են վա-

ճառում: Իսկ հիմա, ամառային այս շոգ օրերին, երբ մարդիկ ցանկանում են երկնային գոլոթյունը վայելել մայրաքաղաքի գրոհայիններում, պուրակներում, արգելված է: Ժամը 10-ից պարետային ժամ է, և մարդիկ պարփակվում են տներում: Լավ է, որ գոնե պատշգամբներում կարող եմ օդ շնչել: Մտածում եմ՝ իմ սիրած պետությունը այդ ինչքան է թուլացել, որ այսօր փուլոգման հոտ է փչում: Չնայած այդ թուլացումը ես զգացել եմ 80-ական թվականների սկզբներին, երբ գերմանացի երիտասարդ օդաչու (անունը ազգանուն մոռացել եմ) օրը ցերեկով իր միկրոիմքնաթիռով վայրէջք է կատարել Մոսկվայի Կարմիր հրապարակում և մարդկանց հետ հարցազրույց արել: Միայն մի քանի ժամ հետո նրան ձերբակալել և բանտարկել են մի քանի տարով: Պետությունը այնքան է թուլացել, որ իր բանակի զինվորները Ադրբեջանի օմոնականների հետ միասին զավթել են շրջկոմների և շրջխորհուրդների վարչական շենքերը: Վերացվել են կուսակցական և խորհրդային շրջանային օրգանները, և այնտեղ տեղափոխվել Բաքվում ձևավորված կազմկոմիտեներ, որոնց նույնիսկ մեր երեխաներն են թոթովախոս լեզվով գոչում. «Կորչեն կազմկոմիտեները», «Կորչեն Պոլիանիչկոն և Սաֆոնովը»:

Եթե օրագիրս ամեն օրվա իրադարձությունները լցնեմ, ապա թուրջ ու գրիչ չի հերիքի, ուստի այն լրացնում եմ մամուլից վերցրած առանձին տեղեկություններով: Այսպես, օրինակ.

**20 հունիսի, 1990թ.:** «Ավանգարդ» թերթում ընթերցում եմ «Խաչվածին մահ չկա» հոդվածը, որում խոսվում է նաև մեզ ծանոթ լենինգրադցի Անատոլի Սոբչակի մասին: Ես մի առիթով գրել եմ, որ նա առաջարկել է ԽՍՀՄ-ից հեռացնել Ադրբեջանին և Հայաստանին, իսկ այսօր էլ, ծանոթանալով նրա հետ համազուտաների պատգամավորների կողմից արած հարցազրույցին, լրիվ հիասթափվեցի: Դեռ 1989թ. նա իր դիրքերը սկսել է զիջել, քանի որ, ինչպես խելամիտ անհատներն են ասում, մի քանի անվաղ ընթացքում բավականին «հղկվել» է Կենտրոնի հոգատար ձեռքով, և լրագրողները առաջվա պես չեն հետապնդում նրան: Չնայած դրան, մեր լրագրողներից մեկը մոտենում է և խնդրում իր կարծիքը դարաբաղային հարցի վերաբերյալ: Նա պատասխանում է. «Բոլոր ձեռագրումները խիստ սրել են իրավիճակը ոչ միայն Արցախում, այլև ողջ երկրում: Այստեղ ճնշումով են փորձում հարցը փակուղի մտցնել, այն դարձել է քաղաքականություն: Հարցը երբևէ լրջորեն չի քննարկվել, դեպուտատները անտեղյակ են: Պետք է բաց միտում ասվի ամեն ինչ, որպեսզի ողջ երկիրն իմանա ճշմարտությունը: Ձեր շարժման սխալներից մեկը ադրբեջանցիներին բռնի դուրս բռնելն էր, որով խորհրդային ողջ երկիրն ծայրահեղորեն տարամղեցրեց ձեր դեմ՝ և Ուկրաինայում Ադրբեջանում բնակվող 700 հազար հայերի մասին: Հիմա կարծեմ պարծենում եք, որ միատարր հանրապետություն եք»: Այնուհետև շարունակում է. «Փաստական» բառը շրջանառության մեջ է մտել Սունդայիթից հետո: Ես չգիտեմ, զուգե ղուք ճի՞շտ է: Բոլոր դեպքերում պետք է երկիրն իմանա, որ Արցախի ժողովուրդը այնտեղ ենթարկվում է թալանի, ճնշման: Ադրբեջանցիները երկու տարի շրջափակել ու թալանում են ոչ միայն հայերին, այլև երկրի աշխատած միլիոնները: Ինձ թվում է՝ համազուտարում դատախազը պետք է պատասխան տա սրա համար, թե ասում են, որ բլոկադան Շուշիի պատասխանն է: Պետք է ստեղծել հաշտեցնող համեմախոսներ, որը կարողանա սեղանի շուրջը նստեցնել երկու կողմերին: Ահա իմ կարծիքը»: Մտածում եմ՝ երբ ամենանշանավոր անհատը այսպես է խոսում, հասարակ մարդի՞կ ինչ կասեն:

**1990թ. հունիսին** շարունակվում էր ԽՍՀՄ ԳԽ երրորդ նստաշրջանը, որը երկրում շուկայական տնտեսության անցնելու մասին որոշում ընդունեց: Հանձնաժողովի մեջ էր ակամավոր տնտեսագետ Աբել Աղամբեյյանը:

**24.06.1990թ.:** «Մուկեթիկ» թերթի այսօր-

վա համարից իմացա, որ Մ. Գորբաչովը գտնվելով ԱՄՆ-ում, նրան հանդիպել է Ջորջ Դոբնեյանը և «Լոս Անջելես քայմա» օրաթերթը «Ջորջ Դոբնեյան նախագահ Գորբաչովին «դասախոսեց», թե պետք է պաշտպանի Արցախի հայության շահերը» վերտառությամբ հոդված է տպագրել. «Հիմնականին Ջ. Դոբնեյանը նրորեն «դասախոսեց» Գորբաչովին, թե Մոսկվան պետք է ավելի պաշտպանություն ընձեռե Լեռնային Ղարաբաղի հայերուն երկար ու հարաճուն պայքարին և հաճախ արյունալի հակամարտության՝ ադրբեջանցիների հետ»: «Դոբնեյան Գորբաչևեն պահանջեց կասեցնել ադրբեջանական շրջափակումը...»: «Մուկեթիկի» այս համարում տպագրված է նաև 1978թ. ԽՍՀՄ անդամ, կազմակերպության քարտուղար Հրաչուհի Փալանդուլյանի դիմումը: Նա, դիմելով արտասահմանի համար հաղորդումների գլխավոր վարչության սկզբնական կուսակազմակերպությանը, գրում է. «Վերջին երկու տարում համոզվեցի, որ երկրում իրեն անվերապահ միապետ հռչակած ԽՍՀՄ-ն իր ողջ էությանը և գործելակերպով՝ հակաժողովրդական է, իսկ հռչակած կոմունիզմի գաղափարով՝ ոչ միայն սնանկ, այլև՝ վնասակար: Արցախի հայության իրավունքների անպատկառ ոտնահարումը, Ադրբեջանում ծայր առած հակահայկական հալածանքները, ապա Մուկեթյանի ու Բաքվի ցեղասպանությունները ապացուցեցին, որ ԽՍՀՄ-ն հակաժողովրդական լինելուց զատ նաև հակահայկական է: 1990թ. մայիսի 27-ի արյունալի սադրանքով համբերության բաժակը լցվեց: Ես վիրավորական են համարում մնալ այն կուսակցության շարքերում, որի անդամները կարող են հրաման արձակել կրակել երեխայի կամ քնած մարդու վրա, ժողովրդին տանել դեպի անմիտ առձակատում կամ գաղափարակիցը լինել մոսկովյան ու բաքվեցի համագործակցի: Ես հրաժարվում եմ ԽՍՀՄ-ից և այս պահից ինձ համարում եմ անկուսակցական:

Հրաչուհի Փալանդուլյան  
29.05.1990թ.: «Մուկեթիկ», թիվ 4, 24 հունիսի 1990թ.):»

Շատ եմ ցավում, ես ակամատես եմ եղել, թե ինչպես 1989թ. մարտ-ապրիլ ամիսներին մեր քաղաքի բազմաթիվ կոմունիստներ «խորհրդային Ղարաբաղ» թերթի միջուկաբան հանդեսին կանգնել կուստոմները համեմատում համար: Ես գրել եմ, թե ինչպես ադրբեջանցիները 1989թ. փետրվար և մյուս ամիսներին հրապարակայնորեն Բաքվում, Ադրանում, Շուշիում և այլ քաղաքներում կուստոմները վառել են, մոխիր դարձրել: Եվ այսօր էլ ցավով եմ տեսնում, որ մեր հայերը քաղաքակիրթ կերպով են հրաժարվում իրենց սիրած կուսակցությունից: Ես դա թուլություն եմ համարում, պայքարի պասիվ ձև:

Ես 1954թ. բանակի շարքերում եմ կուսանդամության թեկնածու դարձել և հպարտությամբ եմ կրել ու ինչպիսի դժվարությամբ եմ թեկնածությունից կուսանդամ դարձել: 1954-1955թթ. աշխատում էի Բալուջայի միջնակարգ դպրոցում (համատեղության մեջ), և այստեղ թեկնածուական տարիս չլրացած՝ սկզբնական կուսակազմակերպությունը մի տարով էլ երկարաձգեց, և միայն 1956թ. հոկտեմբերին ինձ հաջողվեց Խրամորթի 7-ամյա դպրոցի սկզբնական կուսակազմակերպության ընդհանուր ժողովի որոշմամբ ընդունվել կուսակցության շարքերը: Իսկ այսօր քանի՞-քանի կուսակցականներ կան, որոնք այս կամ այն մարդուն փողոցում, ճաշարանում և այլ վայրերում են ընդունում իրենց կուսակցության շարքեր, տանը կնիքած՝ գրպանից հանում և տալիս են ցանկացողներին, պատահական մարդկանց: Արդեն 66 տարի է, ես կոմունիստական կուսակցության շարքերում եմ: Ուրախ եմ և հավատարիմ, որ ունենք երկու հայկական հանրապետություններ: Ես սրտանց պաշտպանում եմ, բայց նաև հպարտ եմ, որ կոմունիստ եմ:

**Մառլեն ԾԱՋՆԱԶԱՐՅԱՆ**  
Մշակույթի վաստակավոր աշխատող անհապական թոշակառու

ՀՆՈՒՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ՅՈՒՆԻՍԵՖ-Ի ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ Է ՔՈՎԻԴ-19-ԻՆ

Պատասխանում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի կրթական ծրագրերի ղեկավար Ալվարո Պոլոսյանը

Հարց 1. Ինչպիսի՞ ազդեցություն ունեցավ այս համավարակը երեխաների կրթության և ուսումնառության վրա Հայաստանում:

Ալվարո: Կորոնավիրուսի տարածումով պայմանավորված ճգնաժամային իրավիճակը թե՛ անբողջ աշխարհի, թե՛ Հայաստանի կրթական համակարգի համար դարձավ իսկական մարտահրավեր: ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարներն անմիջապես հայտարարեցին, որ աշխարհն այսօր առերեսվում է ոչ միայն առողջապահական, այլ նաև՝ կրթական լուրջ ճգնաժամի հետ, որը խորացնելու է առանց այդ էլ գոյություն ունեցող անհավասարությունները և խտրականությունը: Փաստացի մի այնպիսի իրավիճակ ստեղծվեց, որ առկա ուսուցում այլևս հնարավոր չէր իրականացնել: Պետք էր այս խնդիրն շատ արագ լուծում տալ և ապահովել յուրաքանչյուր աշակերտի կրթության շարունակականությունն այլընտրանքային մոտեցումներով: Հայաստանի պարագայում պետք էր ապահովել 1403 դպրոցներում սովորող 391.143 աշակերտների ուսումնական գործընթացը 38.167 ուսուցիչների և առկա ռեսուրսների կիրառմամբ:

Այստեղ օգնության եկան տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները: Օգնեց նաև այն, որ Հայաստանում վերջին 10 տարիներին ստեղծվել էին բավականաչափ ռեսուրսներ, ինչպես Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության տակ գտնվող Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ), այնպես էլ ոչ պետական կազմակերպությունների և անհատների կողմից: Ավելին, ԿՏԱԿ-ը իրականացրել էր հեռավար ուսուցման փորձնական ծրագիր երկու հեռավոր գյուղական դպրոցներում, որտեղ առկա էր առարկայական ուսուցիչների պակաս: Ու հետաքրքիր էր նաև, որ բոլորովին վերջերս էր հաստատվել հեռավար կրթության կանոնակարգը, որում նախատեսվում էր հանրակրթական հաստատությունների նման մասշտաբի փակման դեպքում հեռավար կրթության անցնելու հնարավոր տարբերակ: Ինչպես ասում են, ամեն ճգնաժամի մեջ պետք է փնտրել հնարավորություններ: Այս համաճարակը, իր ողջ բացասական հետևանքներով հանդերձ, կարծես դարձավ հեռավար ուսուցման լայնածավալ փորձարկումը Հայաստանում:

Խոսելով խնդիրների մասին՝ մենք չենք կարող չխոսել վաղ ուսումնառության ու նախադպրոցական կրթության դադարի մասին: Այսօր փակ են բոլոր մանկապարտեզներն ու նախդպրոցական հաստատությունները ևս, իսկ երեխաները փաստորեն բաց են թողնում իրենց զարգացման համար այդքան կարևոր կրթությունը: Մասնավոր մանկապարտեզները փորձում են իրականացնել պարապմունքները հեռավար ռեժիմով, բայց հետագայում անհրաժեշտ է հեռավար պարապմունքներ մշակել նաև այս տարիքի երեխաների համար, հատկապես նախադպրոցական խմբի՝ նրանց սահուն անցումը տարրական դպրոց ապահովելու համար:

Հարկավոր է նաև մոնիտորինգի մեխանիզմներ մշակել, որպեսզի հետագայում կարողանանք հաշվարկել, թե երեխաների որ մասը չվերադարձավ դպրոց և ինչու:

Հարց 2. Որո՞նք են հիմնական խնդիրներն ու երեխաների ամենախնցելի խնդիրը:

Ալվարո: Ճիշտ է, շնորհիվ արդեն իսկ իրականացրած փորձարկումների, Հայաստանում շատ արագ կազմակերպվեց հեռավար ուսուցումը, սակայն հենց սկզբից ի հայտ եկան հետևյալ խնդիրները:

1. Հայաստանում բնակվող ամենա-

խոցելի երեխաները, ովքեր չունեն համակարգչային սարքավորումներ կամ հեռախոս, ինտերնետ հասանելիություն, դուրս են մնում կրթությունից: Նույնը վերաբերում է նաև ուսուցիչներին: Նախարարությունը փորձեց արագ լուծում տալ խնդիրն և նախաձեռնեց համակարգիչների հավաքագրում, այնուհետև դրանց տրամադրում այս խնդրին: Սակայն դեռ կան հազարավոր երեխաներ և ուսուցիչներ, որոնք համակարգչի և համացանցի հասանելիություն չունեն: Կազմակերպվեց նաև դասերի հեռարձակում հանրային և մարզային հեռուստասլիքներով, հեռահաղորդակցության բոլոր օպերատորները տրամադրեցին անվճար հասանելիություն առցանց դասերի և ռեսուրսների համար:

2. Երկրորդ խնդիրը, որ ի հայտ եկավ անմիջապես, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաների համար հեռավար ուսուցման մասնագիտական աջակցության կազմակերպումն էր: Անբողջ աշխարհում այս երեխաների համար հատուկ տեխնոլոգիաներ գոյություն ունեն, իսկ մեզ մոտ այսպիսի մոտեցումը կրկին փորձնական ծրագրերի մակարդակով է իրականացվել և երբեք չի դարձել կրթական քաղաքականության մաս՝ հնարավորություն չտալով այս երեխաներին իրացնել իրենց կրթության իրավունքը:

3. Ունենք նաև հաշմանդամություն ունեցող երեխաների համար առցանց կրթության հասանելիության ապահովման խնդիր: Հաշմանդամություն ունեցող երեխաները նույնպես կարող են լինել կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների շարքում, եթե իրենց հատուկ տեխնոլոգիաներ չեն տրամադրվում, ինչպիսին են, օրինակ, տեսողության խնդիր ունեցող երեխաների համար խոսող գրքերը կամ լսողության խնդիր ունեցող երեխաների համար սուրդո թարգմանությունը: Սկզբնական շրջանում հեռուստատեսային դասերը, ցավով, առանց սուրդո թարգմանության են նկարահանվում, քանի որ շեշտը դրված է արագության վրա: Առաջնահերթությունը տրվել է ավելի մեծ խմբերի համար հասանելիության ապահովմանը: Սակայն վերջերս որոշ դասեր արդեն մատչելի են հայերեն ժեստերի լեզվով: Առկա են նաև խոսող գրքեր՝ տեսողության խնդիր ունեցող երեխաների համար:

4. Տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների զարգացման լուրջ խնդիր կա: Թե՛ ուսուցիչները և թե՛ աշակերտները տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու խնդիր ունեն: Այս իրավիճակը ցույց տվեց, որ ճիշտ չէ այն կարծիքը, թե՛ աշակերտները ավելի հմուտ են տեխնոլոգիաներից օգտվելու հարցում: Ուսանելու համար թվային սարքավորումներից օգտվելուն նրանք, բնավ, պատրաստ չէին: Նույնը վերաբերում է նաև ուսուցիչներին:

Թվային տեխնոլոգիաների և հեռավար դասերի հետ համատեղ առաջ է գալիս կիրառական տեխնոլոգիաների համացանցից անվտանգ օգտվելու խնդիրը: Հեռավար կրթության անցման առաջին օրերին շատ մեծ էր ոգևորությունը, և ուսուցիչները, ծնողները, երեխաները ամիջապես սկսեցին նկարներ տարածել, թե՛ ինչպես են երեխաները առցանց դասին մասնակցում: Երեխաները նաև սկսեցին գրանցվել տարբեր հարթակներում՝ բացեիքաց տեղադրելով իրենց բոլոր անձնական տվյալները: Սա խնդիր է, որն առանձին կրթություն և տեղեկացվածություն է պահանջում:

Հարց 3: Ինչպե՞ս է աջակցում ՅՈՒՆԻՍԵՖ-ը հեռավար կրթության զարգացմանը Հայաստանում:

Ալվարո: Աշխատում ենք հետևյալ

չորս ուղղություններով.

1. Որակյալ դասերի պատրաստում և բոլոր երեխաների համար դրանց հասանելիության ապահովում: ՅՈՒՆԻՍԵՖ-ը կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնում ստեղծեց հեռավար դասընթացների նկարահանման երկրորդ հազեցած տաղավարը, որը թույլ է տալիս առաջին տաղավարին զուգահեռ իրականացնել դասերի նկարահանում: Պատրաստ լինելուն պես դասերը տեղադրվում են ԿԳՄՍՆ յուրօրյան ալիքում և տրամադրվում հեռուստատեսությամբ:

Հիմնականում նկարահանվում են 1-9-րդ դասարանների դասերը: Առանձին աշխատանք է իրականացվում ուսուցիչների հետ, որպեսզի դասերը ինտերակտիվության տարրեր պարունակեն և երեխաների համար ավելի գրավիչ ու հասկանալի լինեն:

Ի դեպ, աջակցում ենք նաև ուսուցիչների տեղեկատվական հմտությունների զարգացմանը: Անընդհատ կա ուսուցիչների հետ փոխադարձ կապ, որը թույլ է տալիս հնարավորինս բարելավել այս դասերի որակը:

Այս պահին ամեն ինչ արվում է, որ դասերը համապատասխանեն այսօրվա պետական ծրագրին: Այսինքն, եթե երեխաները գնային դպրոց, հենց այդ թեմաները պետք է յուրացնեին: Հաջորդիվ անպայման աշխատելու ենք այս դասերի հասանելիության բարելավիչի վրա: Մեզ համար սկզբունքային է, որ այս դասերը հասանելի լինեն բոլոր երեխաների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների համար: Ինչպես արդեն նշեցի, որոշ դասեր արդեն մատչելի են հայերեն ժեստերի լեզվով.

2. Ուսուցիչների վերապատրաստում և մանկավարժության նոր բլոկի ձևավորում: Մենք գիտակցում ենք, որ առցանց ուսուցումը միայն տեղեկատվական տեխնոլոգիաները չեն: Այն մանկավարժության առանձին բլոկ է: Յուրիսի մանկավարժական համալսարանի հետ դասընթաց է մշակվել ուսուցիչների համար, որի կենտրոնում հեռավար կրթության կազմակերպման հմտություններն են: Ծրագիրը մշակվել է Հարվարդի համալսարանի ու Ֆրանսիական հետազոտությունների և նորարարական կենտրոնի հետ համագործակցությամբ: Մենք առաջարկելու ենք մեր ուսուցիչներին, որոնք աշխատում են առցանց դասերի նկարահանման վրա, մասնակցել այս առցանց դասընթացին: Ցավոք, դասընթացը կլինի անգլերեն ու հասանելի կլինի սահմանափակ թվով ուսուցիչների համար: Սակայն հետագայում մենք փորձելու ենք այս փաթեթը թարգմանել հայերեն:

3. Հեռավար ուսուցման ուղեցույց և առցանց կրթության ազգային ծրագիր: Մենք առաջարկել ենք մշակել առցանց կրթության ազգային ծրագիր: Առցանց ուսուցումը պետք է դառնա առկա ուսուցման բաղադրիչ մասը: Անբողջ աշխարհն է այդ ուղղությամբ գնում: Մենք չպետք է հետ մնանք, առավել ևս, երբ արդեն տեսանք, որ ունենք մարդկային ռեսուրսների, անհրաժեշտ ծրագրերի և մի շարք այլ բաղադրիչների և՛ առկայություն, և՛ պակաս: Դրա համար պետք է իրականացնել ներկայիս հարկադրված լայնմասշտաբ հեռավար կրթության ծրագրի վերլուծություն, գնահատել, թե՛ ինչը աշխատեց, ինչ բացեր կան և մշակել հեռավար և առցանց ուսուցման ռազմավարություն և կանոնակարգել առկա ռեսուրսները՝ դրանք համապատասխանեցնելով կրթության պետական չափորոշիչ պահանջներին, սովորողների տարիքային զարգացման և ուսումնառության առանձնահատկություններին:

ИМЕТЬ ДРУГА - ВЕЛИКОЕ БЛАГО



Ежегодно 9-ое июня отмечается Международный день друзей.

В этом году мне хочется продолжить цикл своих статей о друзьях, с которыми меня свел Карабах.

Всем, живущим на нашей исторической земле, знакомо имя Ашота Эрнестовича Бегларяна. Он прошел арцахскую войну с первых дней до последних, испытал все муки ада, сумел сохранить в себе светлые, жизнеутверждающие чувства и своим оптимизмом и любовью к людям по сей день заражает окружающих.

В прошлом учебном году Министерство образования, науки и спорта РА совместно с Русской общиной провели ряд мероприятий под общим названием "Гордимся своими друзьями".

Первое мероприятие "Мой друг" было посвящено писателю А.Бегларяну.

Я благодарен Богу, что являюсь его современником и другом.

Отличительная черта Ашота Бегларяна - это честность, искренность, любовь к Родине. Его произведения заставляют задуматься о смысле жизни и о том месте, которое каждый человек должен занимать в ней.

Читая его книги, ты больше узнаешь, что пережил твой народ, какие сильные люди защищали древний Арцах. Знакомясь с каждым героем произведений Ашота Бегларяна, ты становишься сильнее, мудрее. А для меня, человека, живущего в Арцахе почти 19 лет, - это еще одно прикосновение к истории своего народа.

Я узнал, через какие испытания войны прошел карабахец, как герои в настоящее время вынуждены преодолевать многочисленные послевоенные проблемы, как они несут на себе всю тяжесть последствия войны.

Его рассказы не оставляют нас равнодушными. Они заставляют задуматься, как жить и что делать, чтобы люди, пережившие войну, чувствовали заботу и внимание к себе.

Сегодня рассказы Ашота Бегларяна уверенно лидируют на международном сайте Art Of War, где публикуется творчество ветеранов последних войн со всего мира.

Рассказ А.Бегларяна "Мать" включен в переизданный в 2019-ом году учебник "Русский язык. Диалог культур" для 12-ых классов старших школ Армении (классов с гуманитарным уклоном).

В ноябре 2015 года впервые за многие годы в Москве было организовано масштабное и разноплановое мероприятие "Дни Арцаха". Программа была весьма интересная, она понравилась российской общественности.

В ходе состоявшихся Дней в Постоянном представительстве НКР в Москве была проведена встреча "Переплетение культур как переплетение судеб народов", на которой представители арцахской делегации были награждены юбилейной медалью "В память 200-летия со дня рождения М.Ю.Лермонтова". В числе удостоенных этой медали были и мы - Ашот Бегларян и я, Осипов Рубен.

Бегларян А.Э. награжден медалями Нагорно-Карабахской Республики и Республики Армения "За боевые заслуги", медалью "Материнская благодарность доблестным сынам Арцаха", памятными медалями российского Института политических и социальных исследований Черноморско - Каспийского региона и многими другими армянскими и российскими медалями, грамотами и дипломами.

В 2018 году указом Президента НКР Ашот Бегларян удостоен звания "Заслуженный журналист Нагорно-Карабахской Республики" за многолетнюю плодотворную деятельность на информационном поле Арцаха и в связи с его 50-летием.

Я уверен, что каждый житель Арцаха пожелает нашему писателю, журналисту творческих успехов и надеемся, что из года в год будет возрастать интерес к его произведениям.

Рубен ОСИПОВ  
государственный инспектор  
Министерства образования, науки и культуры РА



ՃՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ԿՐԹՅԱԽԻ 60-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

Շուշիի Խ. Արովյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցը հենակետային կրթօջախ է, որտեղ կրթվում ու դաստիարակվում են 600-ից ավելի դպրոցահասակ սաներ: Անգամ արտակարգ իրադրության պայմաններում այն իրեն դրսևորեց բարեխիղճ աշխատանքով և աշխատանքներին հետամուտ լինելու վճռականությամբ: Դպրոցը առանց ընդհատելու իր աշխատանքներն էր շարունակում նոր մարտահրավերի՝ կորոնավիրուսի տարածման ժամանակահատվածում: Ուսումնական գործընթացները ուստարվա վերջին բարեհաջող հասան վերջնական համարվանի:

Ահա թե ինչու 2019-2020 ուստարին ևս վառ վկայությունն է այն իրողության, որ ուսուցիչը ձեռնամուխ է լինում կատարելու այն ամենը, ինչը շղախված է մանկավարժի խղճով ու անելիքի իմացությամբ՝ իրականացնելով իր առջև դրված խնդիրները: Այո, անելիքները տեղափոխվել են հեռավար դաշտ՝ իրացնելու համակարգչային դասեր, և մանկավարժից պահանջվում է նորովի վերակարգավորումներ կատարել, ինչին տիրապետում է ժամանակակից դպրոցի ուսուցիչը: Այն, որ ուսուցիչները հեռավար կարգով իրագործել են դասընթացի մարտ-մայիս ամիսների ուսումնական նյութը, արդեն իսկ ակնհայտ է, իսկ որոնողական և կատարելագործման աշխատանքները դեռ շարունակվելու են... Ամեն ինչ գնում է կատարելագործման ուղիով, և եթե նոր ուսումնականն էլ պետք է դիմագրավի նոր մարտահրավերներ, անելիքները կշարունակեն մնալ հեռավար հարթակում:

Իսկ ինչ վերաբերում է կրթօջախի՝ տարիների վաստակ ունեցող մանկավարժներին, նրանց աշխատանքը շարունակում է աչքի ընկնել բարեխիղճությամբ: Նրանց վաստակն անգնահատելի է, նրանց միջոցով վառ է մնում կրթության և գիտության վսեմ գործը:

Ստորև ներկայացնում ենք մեր կրթօջախի 2019-2020 ուստարվա բազմավաստակ հորեյարներին, որոնց ավանդը ծանրակշիռ է դպրոցի հիմնադրման (1956թ.) և վերաբացման (1992թ.) պատմության մեջ, որոնց շնորհիվ կրթօջախի հարուստ ավանդներին ավելանում են ևս մի քանի ուշագրավ էջեր:

ՊԱՍՎԱՐԸ՝ ԼԻ ՍԻՐՈՎ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՃԱՇՏԱԿՈՎ



Յ ու ռ ա - ք ա ն չ յ ու ը տ ա վ ո Ր անհատ ու - նի իր հոգևոր հարուստ աշխարհը, ուր լսվում է ուրույն հոգու մեղեդի: Եվ եթե մեղեդին ալիքվում է բարձրա -

ձայն, ելևէջվում է քաղցրաբար: Մեր դպրոցի դասավարժներից մեկը՝ Սուսաննա Բեգլարյանը (27.10.1959), ոչ միայն ուսուցիչ է բառացի իմաստով, այլ նաև երաժշտության գիտակ: Ունի 39 տարվա մանկավարժական աշխատանքի փորձ և դեռ ունի ավյուն՝ նվիրվելու սերունդներին: Նախ ավարտել է Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանը, ապա՝ մանկավարժական ինստիտուտը: Դասվարի մոտ ուսուցիչ լինելն ու երաժշտության դասատուն միասին ստեղծում են գեղեցիկ ներդաշնակություն՝ լրացնելով մեկը մյուսին: Կազմակերպված բաց դասերի ու միջոցառումների ընթացքում ուսուցչուհին օգտագործում է իր հնարավորությունները՝ գեղագիտական հաճույք պատճառելով ներկաներին, ունկնդիրներին: Միշտ բարյացակամ է սաների հանդեպ, ձգտում է, որ նրանք ունենան սեփական կարծիք, լինեն ազնիվ ու զբասիրտ: Նպաստում է, որ սաները սիրեն ուսումը և կապվեն գրքին:

Սուսաննա Բեգլարյանն աչքի է ընկնում լավատեսությամբ, կարողանում է կարդալ աշակերտների հոգին:

որից հառնում են շատ ուշագրավ դեմքեր: Դրանցից մեկը Էլմիրա Թևոսյանն է, որը ծնվել է հայկերտ Շուշի քաղաքում 1959թ. դեկտեմբերի 24-ին: Մեր կրթօջախի սան է: Ստեփանակերտի մանկավարժական ավարտելուց հետո որպես քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի աշխատանքի է անցել հարազատ կրթօջախում 1982-1995թթ., այնուհետև շարունակել մանկավարժական գործունեությունը 1999թ.-ից, որտեղ աշխատում է առայսօր: Վերին աստիճանի պարտաճանաչ ուսուցչուհի է, ավանդական սովորույթային դպրոց է ներկայանում դասերը սկսվելուց 1 ժամ առաջ, ճշտում անելիքները, հետևում մատենավարությանը, ընկղմվում դպրոցական գործերի մեջ: Ունի գրագետ խոսք, հանդես է գալիս ուշագրավ ելույթներով, կազմակերպում բաց դասեր՝ քիմիայից և կենսաբանությունից: Զնայած վաստակած տարիներին, Էլմիրա Թևոսյանը նույն խոհեմ անձնավորությունն է՝ լի զսպվածությամբ և կյանքի հանդեպ անաչառ վերաբերմունքով: Նրան գնահատում է ողջ կոլեկտիվը:

ՄԱՐԿԱՅԻՆ ԱՄՈՒՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐՈՂԸ...



Գրել Արգեմ տ ի ն Յայրապետյանի (Պոդոսյան) մասին, նշանակում է գրել մի լայնահուն անձնության մասին: Ծնվել է 1960թ. մարտի 27-ին Մարտունու շրջանի Գյունե ճարտար գյուղում: Ունի հարուստ աշխատանքային կենսագրություն: 1982թ. ավարտելով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը ֆիզիկայի ուսուցչի որակավորումով՝ աշխատել է նախ ծննդավայր ճարտարում, ապա 1988-ից՝ Շուշիում: Աշխատել է Շուշիի հումանիտար քոլեջում (նախկինում՝ մշակութալուսավորչական տեխնիկում), միաժամանակ նաև Արովյանի անվան դպրոցում, այնուհետև Մուրադաբադի անվան ավագ դպրոցում՝ որպես ֆիզիկայի մասնագետ:

2017թ. հիմնավորապես տեղափոխվում է Խ. Արովյանի անվան դպրոց և նշա -

նակվում բնագիտամաթեմատիկական հոսքի ուսնասվար և որպես ֆիզիկայի ուսուցչուհի: Ունի 38 տարվա աշխատանքային փորձ: Աչքի է ընկնում մարդկային լավագույն որակներով. մարդամոտ է, ընկերասեր, օժտված է խղճմտանքի հատկությամբ, մանկավարժին բնորոշ բարությանը, դիմացիմի գնահատելու մեծահոգությամբ և կոլեկտիվի գլխավորությամբ: Տարածում է դրական աուրա և վայելում կոլեկտիվի սերն ու հարգանքը: Դասերին օգտագործում է բազմաշերտ մեթոդներ, քանիցս կազմակերպել է դասդասեր՝ արժանաճարով գովեստների: Իր մանկավարժական փորձը կիսում է երիտասարդ կոլեկտիվի հետ՝ դառնալով նրանց օժանդակող ու խորհրդատու: 60-ամյա ուսուցչուհին տարիների բարձունքից շողարձակում է որպես բարության և մարդկայնության լավագույն գծերի կրող:

ԲԱՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՆԴԵՐԸ



Իր 60-ամյա հորելյանն է տոնել նաև դպրոցի խոհուն դասավարժներից մեկը՝ Սիրվարդ Աղասարյանը: Ծնվել է 1960թ. ապրիլի 15-ին Ասկերանի շրջանի Այ -

գեստան (Բալուջա) գյուղում:

1979թ. ավարտել է Գորիսի մանկավարժական ուսումնարանը գերագանցության դիպլոմով, ապա 1985թ.՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ բաժինը: Նախքան Շուշի տեղափոխվելը աշխատանքային հարուստ փորձ է ձեռք բերել՝ աշխատելով հնձորիստանում, Բաքվում, Ստեփանակերտում որպես դասավար և մանկապարտեզի դաստիարակչուհի:

1992-ից ընտանիքով ապրում է Շուշիում: 1995թ.-ից աշխատանքի է անցնում Խ. Արովյանի անվան դպրոցում որպես տարրական դասարանների դասավար:

Սիրվարդ Աղասարյանն իր սաներին նվիրված ուսուցչուհի է: Նա շուրջն է համախմբում սաներին և ապրում նրանց կյանքով: Նրա հանդարտությունը փո -

խանցվում է նաև սաներին, որոնց ջերմացնում է իր հոգու լույսով և նվիրվածությամբ: Նրա հոգին մի լուսավոր կոլեկտիվ է, ուր ծնունդ է ծաղկում են մատաղ սերունդները: Գնում դասավարն աչքի է ընկնում բարությանը և մեծ ջանքերով:

ԱՅՔ-ԲԵՆ-ԳԻՄ-Ի ՎԱՍՏԱԿԱՆՍ ՈՒՄՈՒՅՉՈՒՐԻՆ



Ա շ խ ա - տանքային հարուստ կենսափորձով, մանկավարժական տակտով աչքի է ընկնում դպրոցի փորձառու ուսուցչուհի Երից մեկը՝ Գոհար Զամ -

բարձունյանը (Սարգսյան), որը և ծնունդով է շուշեցի, և դպրոցի ամենահարուստ ուղի անցած դասավարներից է: Ծնվել է 1960թ. հուլիսի 8-ին բերդաբաղաքում: 1977թ. ավարտելով դպրոցը՝ ընդունվել է Շուշիի մանկավարժական ուսումնարանը, որն ավարտել է գերազանց գնահատականներով: 2004թ. ընդունվել է 2008-ին ավարտել է «Գրիգոր Նարեկացի» համալսարանի «Տարրական կրթություն և մանկավարժության մեթոդիկա» բաժինը:

Մանկավարժական գործունեությունը սկսել է Շուշիի շրջանի Բերդաձոր գյուղում: 1981թ. իր աշխատանքային գործունեությունն է սկսել Խ. Արովյանի անվան դպրոցում նախ որպես ավագ ջոկատավար, ապա մի քանի ամիս անց՝ դասավար: Քանի՜-քանի սերունդներ են կրթվել նրա ջերմությամբ ու մանկավարժական մեթոդներով, քանի՜ մատաղ սիրտ է վառվել նրա հոգու կրակներով:

Գ. Զամբարձունյանը դպրոցի վաստակաշատ դասավարներից է, տարրական դասարանների մեթոդիկայում էրկարանայա նախագահը: Աչքի է ընկնում կազմակերպվածությամբ, բարեխիղճությամբ, պահանջկոտությամբ: Նա ուսումնական գործի լավագույն կազմակերպիչներից է, որի համար 2014թ. ԼՂԶ նախագահ Բակր Սահակյանի հրամանագրով պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:

Շուշիի Խ. Արովյանի անվան դպրոցը հանրապետության բարեխիղճ և կազմակերպված կրթօջախներից է, որում դասավանդող մանկավարժները՝ տնօրեն Լիանա Զարությունյանի զլխավորությամբ, կազմավորել են կուռ մանկավարժական կոլեկտիվ, որի յուրաքանչյուր անդամ աչքի է ընկնում իրեն բնորոշ մանկավարժական ձեռագրով, որոնցից հինգի 60-ամյա հորեյանը լրացել է այս ուստարում:

Շնորհավորելով բեղուն մանկավարժներին իրենց հորեյանի առթիվ՝ մաղթում ենք նրանք քաջառողջություն և երկար ու երջանիկ տարիների կյանք:

Նրանցից ամեն մեկը մի-մի կերոն է սերունդների լուսավորության վեհ ճանապարհին:

Շուշիի Խ. Արովյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Պետք է հետևողական լինել, որպեսզի այս դասերը ունիվերսալ դիզայն ունենան և հասանելի լինեն բոլոր երեխաների համար: Այս դասերից կկարողանան օգտվել ու կշահեն ոչ միայն հաշմանդամություն ունեցող կամ կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող, այլև ցանկացած երեխա, քանի որ դրանք հատուկ մշակված են ու ավելի գրավիչ են երեխաների համար:

4. Աջակցություն դպրոցների վերաբացմանը: Երբ արտակարգ դրությունը ավարտվի, մենք պետք է լուրջ աշխա -

տենք դպրոցները մաքրելու և ախտահանելու ուղղությամբ: Թարգմանվել են ՅՈՒՆԵՍԿՅ-ի, ԿԽ-ի և ԱԴԿ-ի ուղեցույցները, որտեղ հստակ տեղեկատվություն կա, թե պետք է քայլեր նախաձեռնել համաճարակի ժամանակ և մինչև ավարտը դպրոցներում երեխաների անվտանգությունը ապահովելու համար, ինչ հաճախակաճությամբ և ինչ նյութով պետք է ախտահանել դպրոցները, վերահսկել որ ջերմություն ունեցող և հիվանդ երեխաները, ուսուցիչները և դպրոցի աշխատակիցները մնան տանը: Դպրոցների վերա -

բացումից հետո մենք շարունակելու ենք աջակցել նախարարությանը, տրամադրել մշակված ուղեցույցները և մատակարարել անհրաժեշտ հիգիենայի պարագաները, որպեսզի երեխաների համար դպրոց վերադառնալը անվտանգ լինի:

Մենք նաև առաջարկում ենք դպրոցներին սկսել գրանցել և դիտարկել երեխաների մասնակցությունը հեռավար դասերին և այն երեխաների համար, ում հաճախելիությունը ցածր է, հետագայում կազմակերպել արագացված դասընթացներ՝

գուցե ամառային դպրոցների կամ խտացված դասընթացների ձևով, զոնե հիմնական նյութը յուրացնելու համար: Առանց այն էլ մենք գիշում ենք շատ երկրների թե՛ ֆունկցիոնալ մաթեմատիկական գիտելիքների, թե՛ ֆունկցիոնալ գրագիտության, թե՛ ֆունկցիոնալ տեղեկատվական տեխնոլոգիաների հմտությունների հարցում: Եթե այս ուղղությամբ աշխատանքներ չտարվեն, հետագայում խնդիրն ավելի կխորանա:

ՎՐԱԺԵՑ ԿՐՏՆԵՐ ԴՊՐՈՑԻՆ

ԵՐԿՐՈՒ ԱՐԵՎ
Իրապատում հեքիաթ

Նվիրվում է Խնամապատի միջնակարգ դպրոցի 2019-2020 ուստարվա 4-րդ դասարանի շրջանավարտներին, նրանց առաջին ուսուցչուհի՝ վաղամեծիկ Սուսաննա Ներսիսյանին ու դասվար ժենյա Արզումանյանին

Հարգարժան «Լուսարար»: Քանի որ ստեղծված իրավիճակը թույլ չի տալիս կազմակերպել դպրոցի ավանդական հանդեսները, որոնցից է մեզ համար նաև «Հրաժեշտ տարրականին» միջոցառումը, որոշեցինք կրտսեր դպրոցն ավարտելու առթիվ նրանց հեքիաթ նվիրել: Սա անվտանգ է՝ ի տարբերություն նյութական նվերների և չի ենթադրում նրանց ծնողների կողմից ահռելի գումարների կորուստ:

ՍԱՍ ԱՌԱՋԻՆ
Վերևում

- Դուք գոնե հասկանո՞ւմ եք, թե ինչ է կատարվել, անպիտաններ: Ո՞նց ենք մենք նայելու այդ մանուկների աչքերին: Դպրության երկնային խորհրդի կատարյալ լուռության մեջ կրկին որոտաց ատենապետի ահարկու ծայրը: - Շուտով կրկին սեպտեմբեր է: Այնտեղ բոլորը պատրաստվում են Գիտելիքի օրվա շքեղ տոնակատարության: Իսկ ի՞նչ են անելու այդ փոքրիկները, որոնց դուք զրկել եք լույսի աղբյուրից՝ խլելով նրանցից մի մարդու, ով առաջինը բռնեց նրանց ձեռքը ու տարավ դեպի լույսը: - Մենք ոչինչ չէինք կարող անել, ատենապետ, ի պատասխան որոտի՝ հնչեց խորհրդի ամենատարեց անդամի թավշյա ծայրը: -Այդպես էին կամեցել երկնային թագավորությունում: Ինձ ասացին, որ շատ վաղուց էին փնտրում մեկին, ով ոչ միայն առաքինի հոգի կունենար, այլ նաև՝ անձնագրի աշխատանքը: - Դա ժամ էր ... - արդեն քիչ մեղմացած երանգով ասաց ատենապետը: - Դա գիտի նաև Տերը, - ձեռքերը կրծքին խաչած՝ հայացքը վերև հանեց ծերունին: - Բայց ինձ ասացին, որ այլ ելք չկար: Երկրային կյանքում կրած տառապանքների դիմաց երկնային արքայությունը վայելելու ժամն էր Նվիրյալի համար: Կարճատև լուռությունը կրկին խաթարեց ատենապետի որոտը: - Իսկ ինչո՞վ էիք զբաղված դուք ողջ ամառ, անբաններ: Մենք պատասխանատու ենք այդ մանուկների առաջ: Նրանք չեն կարող խախտվել խավարում ու մեռնակ գտնել լույսը: Չէ՞ որ նրանք նոր են ոտք դրել կրթության արահետ ու դեռ շա՛տ երկար ճամփա ունեն անցնելու:

մասն պատասխան տա: Բայց մայրիկներից և ոչ մեկը չկարողացավ այս հարցերին համոզիչ պատասխան գտնել: Բա էլ ո՞նց նրանք իրենց երկրորդ դասարանցի կոչեցն առանց առաջին ուսուցչուհու: Ի վերջո թունը հաղթեց բոլորին: Բոլորին հերթով սկսեց այցելել Երազը:

ՍԱՍ 3-ՐԴ
Երազը

Արևը... Ահա թե ինչ արտացոլանք էր առաջին ուսուցչուհու աչքերում: Լեռան չգիտեր, որ ամառային լուսնկա գիշերվա խաղաղ քնի մեջ ինքը երազ էր տեսնում: Ամեն ինչ չափազանց իրական էր: Դասարանի՝ իր դիմաց գտնվող պատին մի մեծ արև էր փակցված՝ երկար սփռված շողերով: Արևը ժպտում էր: Լեռան մե՞րթ արևին էր նայում, մե՞րթ՝ ընկեր Ներսիսյանին: Ուսուցչուհին ժպտում էր: Նա ինչ-որ բան էր պատմում, իսկ դասարանը կլանված լսում էր: Ամենքին թվում էր, թե ուսուցչուհին հենց իրեն է նայում ու ժպտում է հենց իր համար: Լեռան վստահ էր՝ ընկեր Ներսիսյանին իրեն է նայում ու այդ ժպտն էլ

շատ են խոսում, շատ են պահանջում, շատ են դժգոհում: Նրանք եռում ու քլթքլթում են ողջ օրը թեմիկի պես, գրում են, ջնջում, նկարում, թափում, լացում ու քրքրում... հա՛, ու մեկ էլ՝ անդադար ինչ-որ բան են ուտում: Մի խոսքով՝ նրանց հետ լեզու գտնելը այնքան էլ հեշտ չի լինի: - Իմ ընտրյալին վախեցնելն էլ հեշտ չի լինի, - խորամանկ ժպտաց երիտասարդ խորհրդակցանք,- նա էլ ինձ պես երիտասարդ է, բայց արդեն թրծված է կրթության բովում, խելացի է ու պատասխանատու: - Ուրեմն՝ երաշխավորում եմ: Իսկ դու գնա ու ավետիսը հասցրու բոլորին: Երիտասարդ խորհրդակցանք քայլերն ուղղեց դեպի դուռը դեմքի գոհունակ արտահայտությամբ: - Հա՛, ու մեկ էլ, քանի դեռ չեմ մոռացել, - նրա հետևից կանչեց ատենապետը,- ասա այդ աղջկան, որ այդ դասարանում Ավետ անունով մի ֆուտբոլի գիժ կա: Տղան նրանցից է, ովքեր իրավիճակ փոխել գիտեն: Նա ուժեղ դատողություն ունի, բայց համառ է ու հաստակող: - Ոչինչ, ատենապետ, իմ ընտրյալն ավելի հաստակող է: -Դե ինչ, այս երեխաներին օգնելու իմ առաքելությունն առաջիկա 3 տարիներին համարեմ ավարտված, -բարձրաձայն մեմախոսեց ատենապետը ու իր առջև դրված հաստակոր գրքում ինչ-որ գրառում կատարելուց հետո փակեց այն: Եթե մենք՝ ներքևում գտնվող հասարակ մահկանացուներս, հնարավորություն ունենայինք կարգալ ատենապետի գրառումը, ապա կկարդայինք ընդամենը 3 բառ. «Դասվար ժենյա Արզումանյան»:

ՍԱՍ 5-ՐԴ
Երեք տարի անց

Մոնիտորին փոքրիկ ուղղանկյուններով եզրագծված դեմքերը խոսում էին հերթով, միասին կամ մեկը մյուսին ընդհատելով: Երբեմն պատկերները համարանում էին ու քարանում, երբեմն էլ գորտուկների ճահիճը մեկեն վերսկսում էր իր համերգը: Դրան միախառնվում էին յուրաքանչյուր տնից եկող չրխկոցներն ու զրնգոցները, տնեցիների անզգույշ ասված խոսքերը: Հետո մեկի ծայրը սկսում է արծազանքել, ու թվում է՝ ուր որ է գերմայնային այդ թրթռներից ուղեղը հազար մասի կբաժանվի: Համակարգչի առաջ դժվանորեն նստած Ավետն անհանգիստ շարժումներով քիչ էր մնում կոտրեր աթոռը: Հեռավար դասից ճողոպտելու ցանկությունը հազիվ զսպելուց ներսում ժայթքելու պատրաստ հրաբուխ էր: Բայց այլընտրանք չուներ. «Առաջը ջուր էր, հետևը՝ սուր»: Վեր-տեսախցիկի տեսադաշտից դուրս բանտային հսկիչի կեցվածքով կանգնած մայրիկն էր, իսկ մոնիտորին՝ ընկեր Արզումանյանը: Վերջինս ինքնամոռաց տարված էր հերթական մաթեմատիկական գործողության ոգեշունչ բացատրությամբ, սակայն Ավետը կարող էր երդվել, որ ընկեր Արզումանյանը հեռավար կարդում է իր մտքերն ու գիտի, որ ինքը տանել չի կարողանում այս անշունչ դասերը: - Մայրիկ, ես դպրոց եմ ուզում գնալ, - վերջիվերջո չդիմացավ տղան: - Դու գիտես, որ չի կարելի: Համաճարակը շարունակում է մոլեգնել: Ստիպված ենք այս կերպ սովորել: - Ախր այնքա՛ն լավ էր դպրոցում: Օրերն այնքան լավ էին անցնում ընկեր Արզումանյանի հետ, - տղայի ծայրուն վիշտ ու ափսոսանք կար: Դեմքի՝ մինչ այդ ըմբոստ արտահայտությունը փոխարինվեց երանավետ ժպտով: Իր ջերմ հուշերով տարված՝ նա մոյմիսկ չնկատեց, որ մոնիտորի ուղղանկյունները մեկ ամ մեկ անհետանում են: Հեռավար դասն ավարտվել էր, իսկ Ավետի հիշողության ցաքուցիկը դրվագները միաձուլվում ու կենդանանում էին:

ՍԱՍ 4-ՐԴ
Վերևում

- Քեզ հաջողվե՞ց գործը գլուխ բերել: - Այո՛, ատենապետ: Այդ փոքրիկներն ապահով ձեռքբերում են: - Դու վստա՞հ ես: - Առավել քան վստահ: Այս անգամ նրանք մեռնակ էին: Ատենապետը մտադիր չէր ընկրկել ու շարունակեց հարցախոյզը: - Ո՞վ է նա: - Նա էլ է Նվիրյալ: - Իսկ նա գիտի՞, թե ինչ է իրեն սպասվում: Տեղյա՞կ է, որ այդ երեխաները անչափ հետաքրքրասեր են, սիրում են երգել ու պարել, կամակոր ու քմահաճ են, հաճախ նաև՝ անհաշտ ու կռվարար: Նրանք



Կարճատև լուռությունը կրկին խաթարեց ատենապետի որոտը: - Իսկ ինչո՞վ էիք զբաղված դուք ողջ ամառ, անբաններ: Մենք պատասխանատու ենք այդ մանուկների առաջ: Նրանք չեն կարող խախտվել խավարում ու մեռնակ գտնել լույսը: Չէ՞ որ նրանք նոր են ոտք դրել կրթության արահետ ու դեռ շա՛տ երկար ճամփա ունեն անցնելու:

- Ես գիտեմ ինչ անել: Դա հնչեց այնպես, կարծես խոսողն իրականում ոչինչ չգիտեր: Անվստահ ասված բառերն, այդուհանդերձ, բոլորի զարմացական հայացքներն ուղղեցին դեպի վերջում նստած երիտասարդը: Նա կանգնեց ու շարունակեց: - Ես կգտնեմ մեկին, ով կհամաձայնի առաջնորդել մանուկներին: Վաղուց եմ հետևում այդ հրաշամանուկներին ու գիտեմ, թե որն է նրանց համար լավագույն տարբերակը: Երիտասարդի վառվռում աչքերի շողորմակումը և ավելի ու ավելի համարձակ դարձող հնչերանգը կամաց-կամաց հոգեթով մեղեդու պես պարուրեցին բոլորին: Խորհուրդը թեթևացած շունչ քաշեց:

ՍԱՍ 2-ՐԴ
Ներքևում

Իսկ նույն գիշեր նիրհած գյուղի տներում անկողնում անհանգիստ շուռումուռ էին գալիս առաջին դասարանցիները: Ավելի ճիշտ, նրանք արդեն ավարտել էին I դասարանը, բայց դեռ իրենց երկրորդի չէին համարում: Հետո ինչ, թե արդեն մեսուրայան տառերը ճանաչում, գրում ու կարդում էին: Գիտեին նաև շա՛տ ու շատ ուրիշ բաներ: Բայց հիմա նրանք մեռնակ էին: Ծնողները նրանց ասել էին, որ իրենց սիրելի առաջին ուսուցչուհին այլևս իրենց կողքին չի լինի: Ինչո՞ւ, ինչպե՞ս, ինչի՞ համար: Իրե՞նք են մեղավոր: Իրե՞նք են նրան նեղացրել ու հոգնեցրել, և ընկեր Ներսիսյանը որոշել է հեռանալ իրենցից: Նրանց «ինչու»-ները մնացին անպատասխան: Փոքրիկները սիրում են, որ իրենց հարցերին մայրիկը հատ-հատ ու մանրա-

ՍԱՍ 6-ՐԴ
Սոգության դպրոցի տիկնիկները

Հեքիաթները կարող են լինել նաև առանց չար հերոսների, բայց չեն լինում հեքիաթներ առանց փորձությունների: Մեր հեքիաթն էլ բացառություն չէ, չնայած որ այն արտասովոր է բոլոր առումներով: Մեր արտասովոր հեքիաթի 17 հերոսներն ու նրանց սիրելի ընկեր Արզումանյանը (այսուհետ՝ հեքիաթի Փերին) երեք տարվա ընթացքում անցան 3000 ու մեկ փորձությունների միջով: Բաց դասեր, միջոցառումներ, այցելություններ, արշավներ, մրցույթներ, խնջույքներ, թատրոն ու մանկական սրճարան, խոհարարական դասեր, առարկայական շաբաթներ... Բացահայտեցին աշխարհը, գյուղը, տունն ու բակը: Կացարաններ պատրաստեցին նույնիսկ փոքրիկ թևավոր բարեկամների համար: Իրենց ձեռքով աղցաններ պատրաստեցին ու ... այս մեկին, հաստատ չեք հավատա, լավա՛ջ թխեցին: Բարի փերին միշտ նրանց կողքին էր՝ դասերին, դասամիջոցներին ու անգամ տանը: Բա Փերի է, չէ՞: Սոգական հնարներ գիտեր ու կարողանում էր անտեսանելիորեն թափանցել տներն ու հետևել իր սաներին: Վայը եկել ու տարել էր նրան, ով իրեն կարգին չպահեր: Ով եղել է տիկնիկային թատրոնում, կիսականա այն, ինչ հիմա կպատմեն: Գյուղի 17 տներում մշտապես զգում էին Փերու աներևույթ ներկայությունը: Ընկեր Արզումանյանի փոքրիկ կրկնօրինակները օգտագործում էին նրա բառերը, կրկնում էին նրա դիտողությունները, տնեցիներից պահանջում էին այն կարգ ու կանոնը, որն իրենցից պահանջում էր ընկեր Արզումանյանը: Դա նման էր մի մեծ տիկնիկային թատրոնի, որտեղ 17 խամաճիկների հնչյունավորում ու շարժման մեջ էր դնում բարի Փերին: Բայց թող ձեզ չթվա, թե խամաճիկները վարժեցված ու կամազուրկ էին, ինչպես Կարաբաս-Բարաբասի տիկնիկները: Ո՛չ, իհարկե: Հարրի Փոթերի մոգության դպրոցն իր հրաշագործ գորությունները այս դասարանի կողքին նսեմանում էր, երբ Փերին ձեռքն էր առնում կախարակական փայտիկը: Դա նշանակում էր, որ Փերին պատրաստվում էր հետաքրքրաշարժ մի բան պատմել: Տիկնիկների թատրոնը վեր էր ասվում մի հսկայական ականջի: Ականջը լսում է, լսում ու մեկնեց կերպարանափոխվում մի ահռելի բերանի, որի մեջ 17 լեզու կար: 17 լեզուներից առնվազն 10-ը սկսում են բլբլացնել միաժամանակ: Փերին շատ էր ուզում, որ նրանք բոլորը Հարրի Փոթերի պես օժտված լինե՞ն գերբնական ունակություններով ու վերջ ի վերջո գտնե՞ն փիլիսոփայական քարը: Դրա համար էլ Փերին բավարարում էր նրանց անսպառ հետաքրքրասիրությունը: Կարծում եք դա անելը հե՞շտ է: Անգամ եթե դու փերի ես ու կախարակական փայտիկ ունեն, երբեք չես իմանա՝ ինչ հարց կարող է ծնվել կենդանի տիկնիկի բռաչափ ուղեղում: Ո՞վ է ինչո՞ւ է կառուցել Էյֆելյան աշտարակը, քանի՞ տոննա մետաղ է օգտագործվել... Իսկ ի՞նչ է մետաղը: Այն հալեցնո՞ւմ են: Ի՞նչ եք ասում: Բա ինչպե՞ս: Ինչի՞ մեջ: Իսկ Դուք, ընկեր Արզումանյան, կարո՞ղ եք մետաղ հալեցնել: Բա եկե՛ք հալեցնե՛ք: Ամենածանր մետաղը: Վա՛, բա որ սնդիկը թափվի՞: Թունավորվելո՞ւ ենք: Ո՞նց պիտի հավաքել: Ի՞նչ է պատահելու, եթե չկարողանանք: Փոքրիկ Հարրի Փոթերները մտովի հայտնվում են հիվանդանոցում: Սկսվում է գիտահանրամատչելի երևակայական արշավը ողջ հիվանդանոցով: Բարի Փերին հիմա էլ մեկ-մեկ ներկայացնում է բժշկական սարքավորումները, դեղորայքն ու բժշկական պրոցեդուրաները: Հիվանդանոցի միջանցքի պատին Սարյանի կտավի ռեպրոդուկցիան է: Ո՞վ է Սարյանը: Ու գալիս հասնում ենք

ՍՊՈՐՏ

ԱՊԱԳԱՅԻ ԴՊՐՈՑՆ ՈՒ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Մասնագետները հաճախ են անդրադարձնում այն հարցին, թե ինչպիսիսն պետք է լինի դպրոցն ապագայում: Հարցի շուրջ բոլոր քննարկումները համգում են ժամանակի մարտահրավերներին համահունչ պայմաններ ստեղծելուն՝ ապահովելու համար պատշաճ կրթություն և դաստիարակություն: Մենք մտորեցինք հասարակության համար ֆիզկուլտուրայի իմաստի եւ նշանակության մասին, ինչպես նաեւ պարզաբանեցինք, թե ինչու ֆիզկուլտուրա առարկայի դերը դպրոցում պետք է այլ բնույթ կրի:

Ինչպիսի՞ն պետք է լինի ապագայի դպրոցը: Այդ հարցին պատասխանելու այնքան հեշտ չէ, որքան նկարագրելը, թե ինչպիսիս կլինի մարդկությունը քան, հիսուն, հարյուր կամ ավելի տարիներ հետո: Դպրոցն այսպես թե այնպես լուծում է խնդիրներ, որոնք նրա առջեւ դնում է ժամանակակից հասարակությունը: Այն խնդիրների փոփոխության հետ, որոնք կյանքը կղնի մարդու առջեւ, փոփոխության կենթարկվի նաեւ դպրոցը: Հիմքեր ունենք ենթադրելու, որ մարդիկ հետզհետեւ դառնում են ավելի շատ իրենք իրենց մասին մտածող, իսկ հասարակական հայեցակարգն ու սահմանափակումներն այնքան էլ չեն ճնշում արդեն: Գնալով արդիական են դառնում այնպիսի մասնագիտություններ, որ գործունեության տեսակներ, որտեղ մարդ ինքը կարող է պլանավորել իր կենսակերպը, բաշխել իր ժամանակն այնպես, ինչպես իրեն է հարմար: Դա իսկապես հնարավոր է իրականացնել, հատկապես եթե մարդ «ֆրիլանսեր» է՝ դիզայնավորող, ծրագրավորող, գովազդավորող կամ լեզուագիտ, ֆիզիկական կուլտուրայի հետ կապված, կարողությունների ու հմտությունների դերը գնահատելու և ներդրումը արդարացիորեն գնահատելու: Մարդ կարող է զբաղվել ինքնագարգացմամբ, ժամանակ հատկացնել ընտանիքին, ակտիվ հանգիստ ունենալ աշխարհի տարբեր անկյուններում: Մարդկությունն, այնուամենայնիվ, առաջ է գնում: Մեքենաները կատարում են ավելի շատ աշխատանք, իսկ մարդն ավելի քիչ ժամանակ է տրամադրում

լեցուն մեր կյանքում: Այդ պատճառով, ֆիզիկական կուլտուրայի հետ կապված, կարողությունների ու հմտությունների դերը գնալով կմեծանա: Կպահանջվի հստակ համակարգ, որը փոքր հասակից երեխային կներարկի ֆիզիկական կուլտուրայի հիմնական սկզբունքները, կծեւավորի ֆիզիկապես եւ բարոյապես զարգացած մարդու իղեալ: Ֆիզիկապես զարգացած չլինելը, սեփական մարմնի եւ առողջության հանդեպ տգիտության դրսևորումները, որոնք կարելի է նկատել մեր քաղաքացիներից շատերի մոտ, կդիտվեն որպես վատ հատկություններ: Եվ ի՞նչ դեր պետք է ունենա ֆիզկուլտուրայի ուսուցիչն ապագայի դպրոցում:

Դպրոցում կբարձրանա ֆիզկուլտուրա առարկայի դերն անձի կայացման եւ զարգացման մեջ: Ֆիզկուլտուրայի դասերը կկազմեն ապագա քաղաքացիների աշխարհայացքի եւ աշխարհընկալման ձեւավորման համակարգի մաս: Այդ աշխարհայացքի էությունը կայանում է նրանում, որ առանց հաճելի եւ օգտակար ֆիզիկական ծանրաբեռնվածության ապրել չի կարելի:

Մեր հանրապետության շատ բնակիչների, ինչպես նաեւ մեր մոլորակի քաղաքակիրթ մասին ամբողջությամբ վերցրած, չեն հերիքում լիարժեք ֆիզիկական ծանրաբեռնվածությունը, ճիշտ կազմակերպված ֆիզկուլտուրայի պարապմունքները, որոնք զարգացնում են մարմինն ու ոգին պահում այն տոնուսում, որն անհրաժեշտ է սթրեսներով

սերը կկազմեն ապագա քաղաքացիների աշխարհայացքի եւ աշխարհընկալման ձեւավորման համակարգի մաս: Այդ աշխարհայացքի էությունը կայանում է նրանում, որ առանց հաճելի եւ օգտակար ֆիզիկական ծանրաբեռնվածության ապրել չի կարելի: Իմ մարմինն իմ գործիքն է այս կյանքում, ես տալիս եմ նրան ֆիզիկական ծանրաբեռնվածություն այն չափով, որքան դա օգտակար է եւ նրա, եւ ինձ համար: Դպրոցականներին հարստացնել ֆիզիկական ակտիվության իրականացման հնարավոր ճանապարհները պաշարով: Ուսուցիչն համար ոչ պակաս կարեւոր խնդիր է ինչքան շատ են մարդու համար այդ հնարավորությունները,

այնքան հարմարավետ եւ հետաքրքիր է նրա համար ապրելը: Եթե, օրինակ, բասկետբոլը կամ վոլեյբոլը մարդու համար դարձնելու լինենք այնպիսի զբաղմունք, որով պարապելու կշտապի ազատ ժամերին նա իր կամքին համաձայն (եթե լինի այդպիսի հնարավորություն, իսկ ավելի լավ է ինքը ստեղծի այդպիսի հնարավորություն իր ընտանիքի անդամների, համադասարանցիների, ընկերների հետ), անհրաժեշտ է նրան տալ խաղին վերաբերող սկզբնական հմտություններ, նրան հասցնել սկզբնական հաջողությունների հասնելու ընդունակ վիճակին, իսկ հետո գործը կշարունակեն ազատը, պատվաբերության հարցերը, առողջությունը, հետաքրքրվածությունը:

Սպորտային խաղերով չեն սահմանափակվում ֆիզիկական ակտիվության հնարավոր տեսակները, որոնք հանդեպ սեր մարդկանց եւ սեռերում ֆիզկուլտուրայի ուսուցիչը, կան նաեւ վազք, լող, արշավ, ի վերջո մեր սիրած մարտարվեստները: Դրանք ունեն սոցիալականացնող մեծ նշանակություն, միավորում են մարդկանց եւ ընձեռում ինքնադրսևորման համար հսկայական հնարավորություններ:

Վերլուծությունը հանգում է նրան, որ պետք է գործադրվի դիդակտիկ սկզբունքի եւ կյանքի հետ կապը: Դպրոցն ավարտելով՝ մարդ, որը առօրյա կյանքում մարդիկ-պրոֆեսիոնալ չէ, այլ, օրինակ, հաշվապահ, նկարիչ, բանկի աշխատող, փականագործ կամ մաթեմատիկայի ուսուցիչ, պետք է անընդհատ դիմի ֆիզկուլտուրայի մասին ունեցած գիտելիքներին: Հերթով ձգվել մարզաձողի վրա, մարզական խաղեր խաղալ, կատարել հրում գետնից սենյակում կամ թեթեւ վազել զբոսայգում, լողա-

վազան այցելել, ընկերախմբով հավաքվել եւ ֆուտբոլ կամ վոլեյբոլ խաղալ. ում ինչպես դուր է գալիս: Դպրոցում այնպես պետք է ձեւավորվեն մարդիկ, որ յուրաքանչյուր բակում երեկոներն ընդունված լինի ոչ թե նստարանին գարեջուր խմել, այլ խաղալ որեւէ մարզական խաղ, կազմակերպել, օրինակ, մրցույթ մուտքերի բնակիչների միջեւ: Դա կլինի մի համակարգ, որը կապաշտպանվի հասարակության անդամների եւ նորմերի ու գաղափարների կողմից, իսկ դպրոցում՝ մանկավարժական կոլեկտիվի:

Ֆիզկուլտուրա առարկային կդադարեն վերաբերվել որպես լրացուցիչ առարկայի: Ապագայի դպրոցները կհամալրվեն մեծ թվով տարաբնույթ մարզադահլիճներով, որոնցից օգտվել կկարողանան նաեւ ուսուցիչները, յուրաքանչյուրն իր ընդունակություններին համապատասխան, եւ ոչ մեկն էլ չի խոչընդոտի այն բանին, որ հերթական դասղեկի ժամն անցնի մարզադահլիճում:

Ֆիզիկական ակտիվության տարրերը պետք է տեղակայված լինեն կրթության համակարգում. դպրոցի դաստիարակության մեջ: Այդպես են ամրապնդվում ֆիզիկական ակտիվության բազմազանության բաղադրիչները: Անձը կծեւավորվի այնպես, որ ամբողջ կյանքում մասնակից կլինի ֆիզիկական կուլտուրային: Նոր մարդը նոր դպրոցում ավելի պատասխանատու կլինի իր առողջության եւ ֆիզիկական կերպարի հանդեպ: Իսկ ֆիզկուլտուրայի ուսուցիչն ապագայի դպրոցում պարտավոր կլինի համարժեք պատասխանել անձի եւ հասարակության այդ հայցումներին:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ



նրա ծննդավայր Դոնի Ռոստով և այստեղից էլ երևի, «կնենկեմք» Թեոդոսիա՝ Այվազովսկու ծննդավայրը, եթե այդ պահին հիվանդանոցի դիմացի սրճարանից լսվող մեղեդին չփոխեր մտքերի ընթացքը: Օ, Մոցարտի «Փիշերային սերենադն» է: Ո՞վ է Մոցարտը: Ինչպե՞ս թե Մոցարտը 4 տարեկանում դաշնամուրի համար Կոնցերտ է գրել: Նա հանճա՞ր է: Իսկ ի՞նչ է նշանակում հանճար: Ովքե՞ր էին հանճարի ծնողները, քույրն ու եղբայրը, կինը հարևանները, հարևանների խնամիներն ու ապ ու պապերը: Հարրի Փոքերի մոգության դպրոցում, բարեբախտաբար, գոյություն ունի կախարդական զանգը: Զանգը դասի ավարտ չի հայտարարում միայն: Փրկարար զանգը հնարավորություն է տալիս բարի Փերուն 5 րոպե շունչ առնելու: Դո՛ւք էլ մի պահ ազատ շունչ քաշեցիք: Մի՛ շտապեք ուրախանալ: Փերին Փերի չէ, եթե մարդկային թուլություններ ունի. հոգնում է կամ չարանում, սրճել կամ գոնե լուռ նստել է ուզում: 17 լեզուների մի մալը շարունակում է կարկտահարել նրան խաչաձև հարցումներով, մյուս մասն անցնում է ավելի գործնական պահանջների: Մի տիկնիկի մոտ հյուսերն են քանդվել, մյուսի՝ կոշիկի թողերը: Մեկն իր բրդուճի փողն է կորցրել, մյուսը՝ բրդուճից ծարավել ու ջուր է ուզում, այն՝ էլ տաք: Մեկի փորն է ցավում, մյուսի մոտ թանաքն է պայթել ու այլանդակել ձյունածերմակ վերնաշապիկը: Դռան մոտ կանգնած տղաներն ուր որ է՝ կանցնեն ծեծկրտուքի, երկու աղջիկ ուր որ է՝ կփետրեն իրար գրատախտակը մաքրելու համար, իսկ այդ ընթացքում ինչ-որ մեկը հաստատ տետրն է փորձում խցկել գրքերի ու գրեճական պիտույքների ծանրությունից տնքացող ուսուցչական սեղանի մի անկյուն՝

համառորեն պահանջելով ստուգել իր գրածը: Իսկ մոլորակը շարունակում է պտտվել մոյս ծուլ դանդաղկոտությամբ: Ընկեր Արզումանյանն այլ մոլորակ ունի: Նրա մոլորակը գլխապտույտ արագությամբ իր՝ մեկը մյուսին չմանվող առավոտներն է բացում մոգության դպրոցում: Դասարանի դռնից ներս մտնելուն պես ընկեր Արզումանյանն աստղային փոշու շղարշով պատվում ու ակնթաթորեն վեր է ածվում բարի Փերու: Ձեռքի կավիճը դառնում է կախարդական փայտիկ, գրատախտակը դառնում է դեպի անցյալ ու ապագա հետ ու առաջ անող ժամանակի մեքենա: Ու սկսվում է հրաշագործության ամենօրյա ծիսակարգը:

ՍԱՍ 7-ՐԴ Արևը

Տուևդարձի ճամփան այդ օրն անսովոր հաճելի էր: Տուն դառնալը միշտ է հաճելի, բայց այդ օրը այդ մույն ճամփան անցնելու էին բոլորով ընկերԱրզումանյանի հետ միասին ու տուն չէին գնալու, այլ՝ գյուղի տեսարժան վայրեր այցելելու: Կրաքարով սալապատված ճանապարհը նրանց մեքե բարձրացնում, մեկ իջեցնում էր ոճանց համար ծանոթ, ոճանց էլ՝ անծանոթ թաղամասեր: Ոչ մի նոր բան չկար Լեւոնի համար այդ ճանապարհին, առավել ևս այն վայրը, որտեղ նրանք վերջապես դադար առան: Բացված տեսարանը գնալից էր: Հոկտեմբերյան՝ դեռ նոր-նոր դեղնավուն հանդերձն իր վրա փորձող գողտրիկ բնության աղամանող փայլիլում էր արևի ճառագայթների ցերք: Ան-

խոս հրամանով բոլորը մի պահ կանգ առան: Երբ դու ընդամենը 9 տարեկան ես, 1600 քառակուսի մետրից էլ քիչ մակերես ունեցող լճակը քեզ կարող է անհատակ օվկիանոս թվալ: Մոգության դպրոցի սաներն ակնապիշ նայում էին վիթխարի հայելուն, իսկ վարկյաններ անց խլացնող



գոռում-գոչյուններով նետվեցին դեպի լիճ տանող քարքարոտ գառիթափը: Ապշելու հերթն այս անգամ լճակինն էր: Վաղուց նա իր ափին միանգամից այսքան մանուկներ չէր տեսել, այսքան զիլ ձայներ չէր լսել: Ապշած էր նաև լճակի՝ գմրուխտյա վարսերով ընկերուհին՝ ուռենին: Նա կա՛տ վաղուց է այստեղ՝ իր սիրելի լճակին հավան: Նրանք միասին շատ լավ ու վատ օրեր են տեսել, իրենց առաջ սիրտը բացած մարդկանց շատ դառնագին արցունքներ են կուլ տվել, ամռան աստղազարդ գիշերներին թաթուն սիրո շուկունքի են ականջ դրել... Բայց երբեք չէին տեսել սարսափից գունատված Փերիների: Ընկեր Արզումանյանը թուխս մայրիկի

պես զլխապատառ դես ու դեն էր նետվում՝ իր ճուտիկներին ջրից հեռու պահելու և իր ապահով ու տաքուկ թևերի տակ առնելու համար: Ու մինչ նա անհնազանդ երամն էր հավաքում՝ մոռացած կախարդական փայտիկի մասին, Լեւոնը հրճվանքով ընկերներին էր ծանոթացնում տեղանքի հետ: Քիչ հեռվում իրենց տունն էր, այսինքն՝ սա Լեւոնի համար հարազատ վայր էր, որտեղ նրան ծանոթ էր ամեն քար ու թուփ: Սակայն վաղուց սովորական դարձած բնապատկերին Լեւոնը այսօր այլ աչքերով էր նայում: Կողքին ընկերներն էին ու ընկեր Արզումանյանը: Ինքը հիմա կարող է խոսել սրտի ուզածի չափ, և իրեն ոչ ոք չի ընդհատի: Լճակի հանդեպ իր սերն այսօր իր հետ կիսում է բարի Փերին: Լճակի անդորը հսկող հանդիպակաց բլրի երանգները սկսում էին մզանալ: Արևը կիսով չափ թեքվել էր դեպի բլրի հակառակ կողմը: Օրվա լսածից ու տեսածից հոգնած՝ նա էլ էր դանդաղ տուն դառնում: Բարի Փերին խաղաղվել էր ու դարձյալ ժպտում էր իր առիքնող ժպտով: Նրա աչքերում արտացոլանք կար: Լճակն էր, թե՛ արևը: «Արևը...»,- շշմջաց Լեւոնը: Նա վերև հասեց աչքերը: Մայրամուտի հեռացող արևն իր շողերով փարվել էր փոքրիկներին ու ժպտում էր ծանոթ ու հարազատ ժպտով: Լեւոնը այնքան լավ էր զգում իրեն, թեև ու անհոգ: Չէ՞ որ ինքը խորհրդավոր գաղտնիք գիտեր: Գիտեր, որ իր պես երջանիկ էր նաև հեռացող ԱՐԵՎԸ: Այստեղ՝ Երկրի վրա իր սիրասուն սաներին նա պահ էր տվել մեկ այլ Արևի:

Մեղիկա ՄԵԾԼՈՒՄՅԱՆ

ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԿՏԻ ՇԻՇԱՐԺԱՆ ՕՐԵՐԻՑ



Սկիզբը՝ «Լուսարար»-ի հ. հ. 6-14-ում

7 փետրվարի, երկուշաբթի

Մոտ երկու շաբաթ ընդմիջումից հետո ֆուտբոլի պարապմունքները վերսկսվեցին: Ըստ դպրոցի գլխավոր մարզչի (ընդհանուր սպորտի), հյուրեր պիտի գային մի քանի ֆուտբոլի համար:

Ուրեմն հույս կար, որ մրցաշարի պիտի մասնակցեին:

11 փետրվարի, ուրբաթ

Մտնեմուն էր Սուրբ Վալենտինի տոնը: Դրա կապակցությամբ զվարթ երեկո էր կազմակերպվել Մելքոնյանի մեջ:

Ընդհանրապես շատերն են անհամբեր սպասում զվարթ երեկոներից, բայց այդ երեկոն մի քիչ անհետաքրքիր էր ամեն անգամվա պես լինելու պատճառով:

21 փետրվարի, երկուշաբթի

Ընթերցողը թող ինձ ների ժամանակագրական սխալ դասավորության համար: Այդ սխալը կայանում է նրանում, որ մի քանի շաբաթ առաջ, հազվադեպ լինելով, Լիկոսիսյանը ծյուն էր եկել, և ես դրա մասին չէի գրել մինչ այսօր: Բայց ահա կարդում եմ Ջորջանի, մի գրողի, որին շատ բարձր եմ դասում, «Մի կյանքի պատմություն»-ը: Չեղիմակի հետ մտքով խորանում եմ մանկության մեջ և հիշում եմ, չեմ իմանում ինչու, այդ ծյունը: Եվ ոգևորված հեղինակի գրական շնչով՝ գրում եմ հետևյալը:

Գրադարանում էինք հայերենի պահին և դասերից ազատ, ուսուցչի հրահանգով թերթեր էինք կարդում. մի բան, որ շատ հաճախ էինք անում:

Հանկարծ մի աղջիկ մատենադարանի դուռը բացում է և գոռում.

- Չյո՛ւնը, ծյո՛ւնը, ծյո՛ւն է գալիս:

Այսքանը բավական էր մեր մեջ իրարանցում առաջացնելու համար: Բոլորս վազում էինք դուրս, դեպի դուռը՝ սնան սովահար գայլերի, որոնք վազում էին դեպի ուրը, դիտելու համար երանելի այդ ծյունը:

Դուռը բացեցինք և դուրս թափվեցինք, և ի՛նչ, անբացատրելի հուսախաբություն ու հիասթափություն ենք ապրում. երկինքը մանր-մանր, աննշմարելի փաթիլներ էր շարտում (եթե դրանց կարելի է փաթիլներ անվանել):

Ետ գրադարան պիտի մտնեինք, երբ... ոչ, բախտն այնքան էլ դաժան չէ, ինչպես մենք էինք կարծում... Երբ ծյունը ուժեղացավ: Այո, ուժեղացավ և դարձավ իսկական ծյուն, դարաբաղյան ծյուն:

Բայց ինչքան էլ նմանի դարաբաղյան ծյունի, միևնույն է, մի քիչ էլ պիտի նմաներ կիպրական ծյունի: Այնպես որ, երկար չեմ շարունակելու, քանի որ կարծ տեսեց այդ ծյունը, որ այդքան հուշեր է արթնացնում, երբ հիշում եմ այդ օրը:

27 փետրվարի, կիրակի

Թող ընթերցողը ինձ նորից ների, որ շատ հաճախ չեմ լրացնում օրագիրս: Բավական է մայրեք ամսաթվերին և կտեսնեք, որ դեպքերն ընթանում են երկար ինտերվալներով: Բայց դե ես մեղավոր չեմ, մեղավոր է Մելքոնյանի կյանքը, որ հաճախ չի ընծայում հետաքրքիր օրեր՝ արժանի օրագրի մեջ լրացվելու:

Թեև այսօր այդքան հատկանշական չէ, որպեսզի տեղ գրավի այս հուշատետրում, բայց որպեսզի մի բան լրացրած լինեմ, գրում եմ:

Օրը այդքան կարևոր չէր, չհաշված եկեղեցի գնալը: Բանն այն է, որ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից եկել էր արքեպիսկոպոս Պողոսյանը՝ կատարելու համար այսօրվա Պատարագը և քարոզ ասելու:

Սակայն շատ չնմացի, քանի որ փողերախմբի անդամներով փորձ պիտի ունենայինք:

29 փետրվարի, երեքշաբթի

Այնպիսի դեպքեր, որ պատրաստվում եմ նկարագրել, շատ հաճախ են պատահում: Դա, իհարկե, սպորտային միջոցառումներն են, որոնցով ՄԿՅ-ն հայտնի է:

Այդ օրը Մելքոնյանի փոքր սաները՝ 1985-ի ծնունդ, պիտի խաղային մի շարք դպրոցների հետ: Մերայինները ակտիվ մասնակցություն բերեցին և տիրացան հերթական գավաթին:

Եվ վերջապես այդ օրը նշանավորվում է նրանով, որ հենց խաղի թեժ պահին ինձ տեղեկացնում են, որ ծնողներս զանգահարել են: Ստիպված էի մի 5-10 րոպեով հրաժարվել խաղից և քաջալերող տղաների խմբից անջատվել:

Բայց, այնուամենայնիվ, սկանալտես եղա եզրափակիչ խաղին:

4 մարտի, շաբաթ

Չեմ իմանում երբ, ինչու և ինչ հանգամանքներով հայաստանցի տղաների միջև մի «պատերազմ» առաջացավ: Դա կայանում էր առաջին և երկրորդ հարկերի միջև: Բայց ես, չխառնվելով այդպիսի մանկական, բայց և լուրջ հետևանք հետապնդող գործի, չմիացա առաջնահարկայիններին:

Դա, իհարկե, իսկական կռիվ չէր, այլ մի սովորական ընկերային խաղ, բայց հետևանքները՝ ցավալի և տխուր: Սկզբից դա սկսվեց բարձրորով, հետո առաջը ոլորած երեսարկիցներով, որը մնանում էր գուրգի: Եվ դա է պատճառը, որ այդ խաղը դառնում էր ցավալի և տխուր:

Չետաքրքիր էին ընթանում գործողությունները:

Սերտողություն է, հանգիստ ու լուռ: Մեկ էլ տեսար վերևից մի ժխոր է գալիս. դա երկրորդահարկայիններն են, որոնք ուզում են հանկարծակիի բերել «հակառակորդին»: Բայց դե առաջնահարկայինները միշտ կազմ ու պատրաստ են, ինչպես զինվորը սահմանազխիսի. սրբիչները ոլորած-պատրաստ՝ կախած վզներից: Մի քիչ ինչու հանկարծակի գրոհը օգուտ չի տալիս, և մախրնորից է լինում բացճակատ կռիվը, որը երկրորդահարկայինները երբեք չեն անում իրենց սակավաթիվության համար: Բայց ժողովրդական առածն ասում է. «Երբ չի հերիքում ուժը, վրա է հասնում հնարամտությունը»: Տեսնելով, որ չեն կարող հաղթել հանկարծակի գրոհով, երկրորդահարկայինները դիմում են խորամանկ միջոցների: Երբ մեկին մենակ են տեսնում, բռնում-տանում են սենյակ և հաշիվը մաքրում: Իսկ եթե բռնվողն ունի բարձրահինչեղ ծայր, գոռում է մորթվող խոզի սնան, և յուրայինները վար են թափվում: Եթե օգնության հասնողները նույնիսկ փոքրահասակ են լինում և վտանգավոր չեն լինում, այնուամենայնիվ, խուճապ են առաջացնում հակառակորդի մեջ, և նա շփոթվում է ու փախչում:

Երկրորդահարկայինները, կարելի է ասել, այնքան են թույլ, որ մի ուրիշ խորամանկ միջոց են հնարել. հակառակորդից (կովից գատ օրվա մեծ մասը բարեկամաբար են իրար հետ, նույն սերտ ընկերներն են. «թնամանում» են կովի ժամանակ) վերցնում են որևէ սենյակի բանալի (սենյակի բանալիչը պիտի լինի կարևոր և լավ ծեծելու ենթակա անձ)՝ ասելով, թե սենյակից բան է վերցնելու և ետ բերելու (ահա թե ինչքան վստահելի են իրար), և պահում են հարմար պահի, որպեսզի հարձակման ժամանակ, երբ հակառակորդները փակվեն սենյակում, կարողանան բացել դուռը և ներս խուժել (ճիշտ՝ ինչպես բերդի պարագային): Դա լինում է մեծամասամբ գիշերը, երբ բոլորը քնած՝ բացում են դուռը...

Սակայն առաջնահարկայինները կարողանում են դիմադրել և դուրս բջել սենյակից: Եվ իմանալով, որ չարաչար սխալվել են, որ սովել են բանալիները, որոշում են նույնը անել իրենք:

Այս գիշեր մերայիններին հաջողվեց գտնել հիմնական «որջի» բանալիներից (երկար պատմություն է, թե ինչպես է ծեռք գցվել) և գիշերվա կեսին հարձակվելու են սենյակի վրա 5-6 հոգով: Մի սենյակի վրա, որն ընդգրկում է 3 բնակիչ, որոնցից մեկը դուրս է շարքից՝ իր վատ ձևով վնասված ոտով:

Չետազ դեպքերը չեն իմանում ինչպես կլինեն, քանի որ, ինչպես ասացի, չեմ խառնվում այդ գրոհին: Արդյունքը կիմանամ վաղը և քեզ կասեմ, հավանաբար մյուս էջում: Համբերությունը կյանք է, կապրենք՝ կտեսնենք:

Իսկ այժմ կուպերս են ծանրացել և Մորփեսուն է կանչում իր գիրկը...

5 մարտի, կիրակի

Ես չէի կարծում, որ «բանը կհասնի դիվանբաշուն»: Այդ անհեթեթ պատերազմը իր վախճանը գտավ այս գիշեր՝ տիրանալով իր նպատակին. վերջին բախումը դարձավ մի լուրջ կռվի:

Առաջնահարկայինները նորից բարեխիղճ գտնվեցին և կամավոր ձևով բանալին հանձնեցին հակառակորդին: Եվ սրանով, ըստ պայմանի, պատերազմը պիտի վերջանար: Որոշեցին այլևս չբախվել՝ հասկանալով դրա հետևանքը:

Բայց որոշ անձեր, որոնք որոշ բախումների ժամանակ լավ ծեծ էին կերել որոշ անհատների կողմից, չուզեցին վերջացնել այդ կռիվը և քիմախիղճ որոշեցին լինել: Դրանք մեծամասամբ երկրորդահարկայիններն էին, մանավանդ մի տղա, որի վրա թանկ մատեց անհամաձայն լինելը:

Եվ նա, չգիտեմ ինչպես, հայտնվեց հակառակորդ առաջնահարկայինի մեկի սենյակում: Իմանալով, որ նա դեմ էր դադարին, երկու մերայիններ բռնում են նրան և տանջում:

Մեկը բռնում է նրա ձեռքերից և չի թողնում որևէ շարժում անի, իսկ մյուսը անխնայ խփում էր: Իսկ երրորդը, այն մարդ է ու ցավ է զգում, փորձում էր պաշտպանվել ձեռքերով և ինչու չէ, նաև խփել, մի բան, որն արգելված էր խաղի օրենքների մեջ:

Եվ ահա, երբ տուժողը հերթական անգամ մի ուժգին հարված ստացավ մարմնի վրա, ձեռքի բռունցքով պատասխան տվեց Արթուրին (խփողը): Հավաքվածների մեջ մի տարիքով տղա կար, անունը՝ Վազգեն, սիրում էր Արթուրին և հարգում որպես ընկեր (ավելի փոքր տարիքով): Երբ տեսավ, թե Մարտինը ինչպես բռունցքով խփեց, գոռաց.

- Արա, դու թուրք ե՛ս, սխի՛ ես ձեռքով խփում: Չգիտե՛ս, որ ըստենք բան չի կարելի:

- Մի րոպե, ո՞վ ա թուրքը: Թե ուզում ես իմանաս, թուրքը դու ես,- փորձեց արդարանալ Մարտինը:

- Չըլը մի հատ արի ստեղ: Ո՞վ ա թուրքը: Արա, ես քո...

Ու իսկական կռիվը սկսվեց: Էլ բռունցք, էլ աքացիներ, էլ հայիոյանքներ, էլ ինչ ասես չկար կռվում: Վազգենը տարիքով էր և մի քանի լուրջ հարվածներ տվեց ու վնասեց Մարտինին: Բայց մնացած հավաքվածները մեջ մտան և բաժանեցին իրար՝ ավարտեցնելով կռիվը և հետո իրար հաշտեցնելով:

10 մարտի, ուրբաթ

Մայրամուտ էր դուրսը: Ես որոշ ժամանակ ընթերցանությունից հետո որոշեցի դուրս գալ և մաքուր օդ ընդունել:

Արևը հորիզոնին էր համբուրում՝ բոտրագույն ճառագայթներ նետելով: Սուվերները կամաց-կամաց երկարում էին դեպի արևելք: Սակայն լռություն էր տիրում: Միայն հատուկներ ճնճուկների ձայներ էին լսվում, որոնք նույնիսկ զգացում չէին արթնացնում:

Հանկարծ մի դեպք արթնացավ հիշողության մեջ, որ փոքր-ինչ կապ ուներ ճնճուկների հետ:

Գարնանային մի մայրամուտ էր, երբ պատահեց այդ դեպքը, երբ ծիծեռնակները նոր էին վերադարձել գարնան ավետիսով, երբ երեխաներով դուրսը վազվզում էինք խանդավառությամբ, և երբ մեր ծնողները դուրսը իրար մտքեր էին պարզաբանում:

Ծիծեռնակները, որոնք բույն էին հյուսել մեր շենքի կտուրի տակ, գոնե մի վայրկյան կանգ չէին անում հանգստանալու: Մայրական հոգատարությամբ խնամք էին տանում մատղաշ սերնդին, որը կարծես մեծ բավակա-նություն էր պատճառում նրանց. դա ցույց էին տալիս նրանց խանդավառ ճիչերը:

Այս մթնոլորտի տակ խաղում էինք մենք՝ մեկ-մեկ էլ կանգնելով և դիտելով, թե ինչպես էին մայր ծիծեռնակները ճանճ, մժեղ, որդ կամ ինչ պատահեք բերում և դնում ձագերի բերանները: Իսկ ձագերը բաց բերաններով, որը հիշեցնում էր ձկան բերան, առաջ էին մղվում՝ զավթելու համեղ պատառները: Բայց մայրը ուշիմ է լինում և ըստ հերթականության է սնում ձագերին:

Այսպես շարունակվեց մի որոշ ժամանակ, և այլևս ուշադրություն չէինք դարձնում, քանի որ սովորական երևույթ էր արդեն: Եվ նրանց մոռացած՝ մեր խաղին էինք կենտրոնացած, երբ կտուրից մի սուր ծղոտոց լսեցինք: Վերև մայեցինք և տեսանք ի՛նչ... բույներից մեկից կախված էր ծիծեռնակի ձագ: Մեր ծնողների վկայությամբ դա անզգույշ մեկն էր եղել և մոր կտուցին սնունդ տեսնելով՝ առաջ էր եկել և ընկել: Բարեբախտաբար կարողացել էր կանչել բույնին և չընկնել: Իսկ այժմ սարսափում է՝ տեսնելով, որ անզոր է և շատ չի կարող դիմադրել:

Ծնողները փորձում էին ազատել նրան այդ վիճակից, բայց չէին կարողանում: Մենք ուզում էինք քաջություն ցույց տալ ու բարձրարանալ կտուր և ազատել թռչնակին, բայց ծնողներից թույլտվություն չէինք ստանում:

Չգիտեմ, թե ինչքան ժամանակ անցավ (այդ պահին ո՞վ էր ժամացույցին նայում), երբ ծնող ծիծեռնակներին միացան մի քանի դրացիներ ու իսկական բարեկամի պես գործը գլուխ հանեցին:

Իսկ մենք ներքևը հրձվում էինք. կարծես թե վտանգից ազատվել է ամբողջ աշխարհը: Հավանաբար միշտ այս դեպքը կհիշեմ, երբ կտեսնեմ որևէ թռչուն, մասնավորաբար ծիծեռնակ մայրամուտի պահին:

(շարունակելի) Կրկյոյ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
«Լուսարար» ՓԲԸ
Ստեփանակերտ, 3. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorcirt@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՄՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 11.06.2020թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: